Azg
armenian daily

1 ԱՊՐԻԼ 2003 ԵՐԵՔՇԱԲԹԻ 61(2746)

Արտասովոր թռիչքորբից արդեն 54 մարդ է մահացել

ՄՈՍԿՎԱ, 31 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Աշխարհում արդեն նշվել է արտասովոր թռիչքորբով հիվանդանալու 1550 դեպք, մահացել է 54 մարդ: Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով, վիրուսը թափանցել է 13 պետությունների տարածք: Ռուսաստանում դրանով հիվանդանալու ոչ մի դեպք չի գրանցված: Չեն նշված նաեւ կասկածելի դեպքեր, որոնք սխալմամբ ենթադրել, թե հնարավոր է, որ վարակը թափանցած լինի երկիր: Այդ մասին ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հաղորդել են Ռուսաստանի Սանիտարահամաճարակաբանական հսկողության պետական գերատեսչությունում: Արտասովոր թռիչքորբի հարուցիչը հավանաբար պատկանում է պարամիքսավիրուսների կամ պսակավիրուսների խմբին, նշել են մասնագետները: Այդ վիրուսները կաղված են լրտառական հիվանդությունների հետ: Աշխարհում գրանցվում է հիվանդացողների թվի աճ, սակայն «այդ վիրուսի մեջ ոչ մի գերբնական բան չկա», ասել են Սանիտարահամաճարակաբանական հսկողության գերատեսչությունում: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը խորհուրդ չի տալիս այցելել այն երկրներ, որտեղ նման հիվանդություններ են գրանցված, սակայն այդ պետություններ ուղեւորվելու վրա բժշկական արգելքներ չեն դրված:

ՊԱՏԵՐԱԶՄ

Կատաղի մարտեր Նաջաֆում, Քերբելայում եւ հարավային ճակատի վրա՝ Բասրայի շուրջ

Շաբաթավերջին եւ երեկ ամերիկյան 3-րդ եւ 4-րդ դիվիզիաները կատաղի մարտերի բռնվեցին Նասիրիայից հյուսիս՝ Նաջաֆ, Բաբելոն եւ Քերբելայի ուղղությամբ դիրքավորված արդեն իրաքյան ընտիր զորաբանակների առաջապահների հետ: Ամենակատաղի մարտերը կիրակի օրը տեղի ունեցան պատմական Բաբելոնի մոտակայքում՝ Եփրատի կամուրջների գրավման համար: Ըստ ամերիկյան հրամանատարության, իրենց առաջխաղացման նպատակն է հասնել Քերբելա, ապա թեքվել աջ՝ դեպի Բաղդադ, մինչ այդ թուլացնելով քաղաքը պաշտպանող իրաքյան 4 դիվիզիաները՝ «Համուրաբիի», «Ան Նիդա», «Ալ Մադինա» եւ «Բաղդադ»: Կոալիցիոն ուժերի ներկայացուցչի ասելով, իրենց առաջապահ ուժերն արդեն գտնվում են մայրաքաղաք Բաղդադից ընդամենը 50 կմ-ի վրա:

Սրան անշուշտ համաձայն չեն իրաքցիք: Տեղեկատվության նախարար Մոհամմադ Սաեդ ալ Սաֆահը երեկ տված մամլո ասուլիսում նույնիսկ գոհունակություն հայտնեց, որ կոալիցիոն ուժերի (նա վերջիններս կոչեց «օձ») հետագիծը երկարում է 500 կմ, ինչը, նրա ասելով, մեծ հնարավորություն է տալիս սպանիչ հարվածներ հասցնել նրանց: Նախարարի պնդմամբ, շաբաթավերջին մղված կռիվների ընթացքում իրաքյան ուժերին հաջողվել է ոչնչացնել հակառակորդի 13 հրասայլ, 8 զրահապաս, 6 ռազմական բեռնատար, 4 «Ապաչի» տիպի ուղղաթիռ եւ 2 անմարդ լրտես օդանավ: Կոալիցիոն ուժերը տվել են 43 զոհ եւ 100-ից ավելի վիրավոր:

Նա ոչինչ չասաց իրաքցիների կրած կորուստների մասին, որոնք ամերիկյան հրամանատարության կողմից գնահատվում է 89 սպանված եւ 4582 վիրավոր: Մյուս կողմից, բրիտանական ուժերին հաջողվել է թափանցել հարավային Բասրա քաղաքի հարավ-արեւելյան շրջան եւ տուն առ տուն խուզարկություններ անցկացնել: Անցյուղաքի մոտ հաստատել են նոպատաբաչխ 3 կենտրոններ, որոնց առկայությամբ նոպատակ ունեն սովահար ու ծարավ բնակչությանը հրաժարել քաղաքից դուրս, այնուհետեւ գրոհով գրավել Բասրան:

Անցնող 3 օրերի ընթացքում, գիտեր թե ցերեկ, չդադարեց Բաղդադի օդային եւ հեռահար հրթիռային ռմբակոծումը: Պատմության մեջ առաջին անգամ ամերիկյան B-1, B-2 եւ B-52 ռազմօդանավերը միաժամանակ երեկ հարվածեցին մայրաքաղաքի մի քանի նշանակետեր՝ նախագահ Սադդամի որդիներից մեկի պալատը, հեռուստակայանը, տեղեկատվության նախարարության շենքը: Այսուհանդերձ, հակառակ իրենց հրթիռների ճշգրտության եւ անգամ «մարդասիրության» մասին ամերիկյան հոխորտանքներին, Բաղդադում դրանք հաճախ ընկնում են նաեւ շուկաների եւ հասարակական նշանակության շենքերի վրա: Միջազգային կարծիք խաչի տվյալներով, օդային ռմբակոծություններից օրական միջին հաշվով 100 խաղաղ բնակիչ է զոհվում:

ՃՆՇՈՒՄ

Փաուելը զգուշացրել է Սիրիային

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 31 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Քոլին Փաուելը կոչ է արել Սիրիային հրաժարվել անաբեկչական խմբերին եւ Իրաքի վարչակազմին աջակցություն ցուցաբերելուց:

Ըստ Անատոլու գործակալության, ամերիկյան հրեական կազմակերպությունների հետ հանդիպման ժամանակ Փաուելն ասել է. «Սիրիան կանգնած է ճակատագրական ընտրության առջեւ: Կամ պետք է շարունակի աջակցել անաբեկչական խմբավորումներին եւ վերջին օրերն ապրող Սադդամի վարչակազմին, կամ էլ ընտրի այլ, ավելի շատ հույս ներշնչող ուղղությունը: Երկու ընտրությունների արդյունքներն ու պատասխանատվությունը պարզ պետք է լինեն Սիրիայի համար»:

Տառապանքի որդի Հեյդար Ալիեւը

ԲԱՔՈՒ, 31 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ադրբեջանում այսօր նշվում է, այսպես հորջորջված, «ադրբեջանցիների ցեղասպանության» օրը, որն իբր իրականացրել են հայերը: Այդ օրվա կապակցությամբ իր ժողովրդին ծավալուն ուղերձ է հղել Հեյդար Ալիեւը: Ըստ Ադրբեջանի նախագահի, ադրբեջանցիների ցեղասպանությունը «ազգայնական հայերն արել են օտարերկրյա հովանավորների օգնությամբ, 200 տարի շարունակ սպանելով, ջարդելով եւ, ի վերջո, վտարելով ադրբեջանցիներին դարեր շարունակ նրանց պատկանող պատմական հողերից եւ ստեղծելով այդ տարածքում սեփական պետություն»: «Մեր ժողովրդի բազմադարյան պատմությունը խեղաթյուրվեց, աղավաղվեց, իսկ հայերը ներկայացան իբրեւ հարուստ եւ հնադարյան պատմություն ունեցող մի ազգ», ըստ «Ազատության», ասել է Ալիեւը:

Այսօր տեղի կունենա Գլենդեյլի քաղաքապետի ընտրությունը

Շուրջ 250 հազար բնակչություն ունեցող Գլենդեյլի (Կալիֆորնիա, ԱՄՆ) քաղաքապետի ընտրությունները տեղի կունենան այսօր, ապրիլի 1-ին: Գլխավոր հավակնորդն է համարվում գործող քաղաքապետը՝ Ռաֆֆի Մանուկյանը, որն իր պաշտոնավարության շրջանում աշխատել է գերազանց, գոհ պահելով ոչ միայն քաղաքի 60 հազարից ավելի հայազգի բնակչությանը, այլեւ մյուսներին: Երիտասարդ քաղաքապետը հրաշալի հարաբերություններ ունի մեր ավանդական երկու կուսակցությունների՝ ՀՅ Դաշնակցության եւ Ռամկավար Ազատական կուսակցության հետ, ինչպես նաեւ Գլենդեյլում ազդեցիկ Իրանահայ միության եւ ՀԲԸ Միության հետ:

Նրա, ինչպես նաեւ քաղաքապետության խորհրդի անդամներ Քինտերոյի, Գոմեզի եւ Յուսեֆյանի ջանքերով, վերջերս Իրանահայ միությանը քաղաքի կենտրոնում հատկացվեց հողատարածք՝ կենտրոնական հավաքատեղի կառուցելու: Հատկացվեց նաեւ 5 մլն դոլար՝ շինարարությունն իրականացնելու համար: Օրերս ՌԱԿ Կալիֆորնիայի շրջանային վարչությունը հանդես եկավ հայտարարությամբ, որով կոչ է անում Գլենդեյլի հայությանը միահամուռ իրենց ձայնը տալու գործող քաղաքապետ Ռ. Մանուկյանին:

Արմեն Սարգսյանի բուժման համար հատուկ հիվանդանոցային պայմաններ չեն պահանջվում

ԵՐԵՎԱՆ, 31 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Տիգրան Նաղդալյանի սպանության գործով կալանավորված Արմեն Սարգսյանի հիվանդության բուժման համար հատուկ հիվանդանոցային պայմաններ չեն պահանջվում, եւ բուժումը կարող է իրականացվել նաեւ ինչպես մեկուսարանի պայմաններում: Ինչպես մարտի 31-ին հայտնեց մեղադրյալի պաշտպան, փաստաբան Ռոբերտ Գրիգորյանը, այսպիսի եզրակացության են եկել բժիշկները Ա. Սարգսյանի առողջական վիճակը հետազոտելուց հետո:

ՕՐԱԽՆԴԻՐ

«Ձլ մասին» օրենքը լուրջ վերափոխումների կարիք ունի

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Զանգվածային լրատվության մասին» նոր, հերթական օրենքի նախագիծը վերստին իրարամերժ գնահատականների է արժանացել: Այն, իհարկե, անհամեմատելի է օրենքի նախագծի սկզբնական տարբերակի հետ: Զգալի են փոփոխությունները նաեւ առաջին տարբերակի համընդհանուր մերժմամբ պայմանավորված նոր՝ երկրորդ տարբերակի համեմատ: Սակայն այս, թվով երրորդ օրենքի նախագծում եւս կան անընդունելի եւ վիճելի դրույթներ, որոնց մի մասն առկա էր նաեւ նախորդ տարբերակում: Մեր թերթի խմբագրակազմի դիտողություններն ու առաջարկները այդ ժամանակ ներկայացրինք արդարադատության նախարարությունը: Սակայն դրանցից մի քանիսի մասին ստիպված ենք վերստին գրել, քանի որ խորհրդարանի հատատմանը ներկայացված տարբերակում դրանք հաշվի չեն առնվել: Բնականաբար, նոր նախագիծն առաջ է բերել նաեւ նոր դիտողություններ:

Օրենքի 4-րդ «Խոսքի ազատության ապահովման երաշխիքները» հոդվածի 5-րդ կետում նշված են այն դեպքերը, երբ կարելի է լրատվամիջոցների տարածումը սահմանափակել: Զգիտես ինչու, այդ դեպքերի շարքում, բացի ռազմական դրությունից, սահմանադրական կարգին սպառնացող վտանգից, նշված է նաեւ արտակարգ իրավիճակը: Ընդ որում, որեւէ կերպ չի սահմանվում, թե ինչ է դա նշանակում: Մեր ընկալմամբ, դա տեղի է ունենում տարերային կամ տեխնածին աղետների դեպքում: Եթե այդ ժամանակ լրատվամիջոցը կարողանում է հրապարակվել եւ տեղեկատվություն տարածել, ապա դա ոչ թե սահմանափակման, այլ գովեստի է արժանի: Հետեւաբար, «արտակարգ իրավիճակ» բառակապակցությունն այստեղ հարկ է հանել:

Տես էջ 3

Վերջապես կտաքանա

ԵՐԵՎԱՆ, 31 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Այս շաբաթ Հայաստանի տարածքում տեղումներ չեն սպասվում, եւ օդի ջերմաստիճանը 5-10 աստիճանով կբարձրանա: Ինչպես հայտնեց «Հայհիդրոմետ» վարչության պետ Գենադի Կոջոյանը, ապրիլ ամսվա առաջին կեսին սպասվում է նորմային մոտ ջերմաստիճան, նույնիսկ 1-2 աստիճանով բարձր: Այդ օրերին Երեւանում միջին ջերմաստիճանը կլինի +12 աստիճան:

Վերջին դասը մայիսի 23-ին

ԵՐԵՎԱՆ, 31 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Համաձայն ՀՀ կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանի հրամանի, Հայաստանի հանրակրթական դպրոցներում 2002-2003 ուսումնական տարվա դասերի վերջին օրն է մայիսի 23-ը: Ինչպես նշված է նախարարության հաղորդագրությունում, այս որոշումը նախարարը ընդունել է՝ ելնելով դպրոցների տնօրենների, մարզպետարանների եւ Երեւանի քաղաքապետարանի կրթության վարչությունների առաջարկություններից:

ԸՆԹԱՑԻԿ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

Աշխատել սիրող եւ կարողացող մարդկանց միություն

Վանաձորը Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության գաղափարախոսության համար վաղուց արդեն գործունեության լայն դաշտ է ապահովել: Լոռու մարզկենտրոնի բնակիչները ոչ միայն սիրով դառնում են կուսակցության համակիրներ, այլեւ համալրում են նրա շարքերը:

Այսպես էր նաեւ այս անգամ, երբ Վանաձորում էր ՀՌԱԿ Հանրապետական վարչության անդամ Կարեն Կակոյանը: ՀՌԱԿ Հանրապետական վարչության անդամ, Լոռու շրջանակի ատենապետ Ֆերդինանդ Հարությունի հետ նրանք ներկա գտնվեցին կուսակցական սկզբնական նոր կազմակերպության՝ «Նարեկ» ակումբի ձեւավորմանը (ատենապետ ընտրվեց Արսակ Մարուքյանը): Բացի այդ արդեն գործող «Քիմիագործ», «Վան», «Կենտրոն», «Տարոն» ակումբները համալրվեցին 48 նորագիրներով:

Անկեղծ ու բաց խոսակցության ժամանակ ինչպես կուսակցության Հանրապետական վարչության ներկայացուցիչները, այնպես էլ հին ու նոր անդամները մեծ կարեւորություն տվեցին Աժ գալիք ընտրություններին, ճշմարիտ գնահատելով նախագահական անցած ընտրությունները: Ազատական կարգերը, մասնավոր եւ պետական ձեռնարկությունների համակցությամբ գործող տնտեսական համակարգը զարգացնելու ՀՌԱԿ ծրագիրը լայն հնարավորություններ է ստեղծում աշխատել կարողացող եւ աշխատել սիրող մարդու համար: Դա է պատճառը, որ կուսակցության անդամների թիվն ավելանում է:

Ս. Մ.

Աջակցություն իրանահայերին

Իրանահայերի բարեգործական մշակութային միությունը անհանգստություն է արտահայտում իրական պատերազմի կապակցությամբ եւ խորապես մտահոգված է Իրանի ժողովրդի եւ հայ համայնքի ծանր վիճակի համար:

Միությունը պահանջում է դադարեցնել պատերազմական գործողությունները եւ վերսկսել բանակցությունները ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում:

Թեեւ, Իրանից ստացված տեղեկությունների համաձայն, մինչ օրս հայեր չեն զոհվել, սակայն ահեղ ռմբակոծումների նման իրավիճակում նրանց անվտանգությունը երաշխավորված չէ:

Ողջունելով ՀՀ ԱԳՆ-ի պատասխանությունը Իրանի եւ հարակից երկրների հայերի մուտքը Հայաստան դյուրացնելու խնդրում՝ միությունն իր աջակցությունն է հայտնում հայրենիք ժամանած հայերի կեցության եւ կենցաղային խնդիրները պետական մարմինների հետ լուծելու համար:

Մեր խաղաքը մեր տունն է

Մարտի 14-ից ապրիլի 14-ը հայտարարված է բարեկարգման, սանմաքրման եւ կանաչապատման միամսյակ: Մեր քաղաքում տեղի են ունենում հաճելի փոփոխություններ: Քաղաքի որոշ փողոցներ ասֆալտածածկույթը եւ կարծես թե ավելի հոգատար ձեռքերով են կանաչապատվում տարածքները: Կազմակերպվում են շաբաթօրյակներ, ծառատունկեր:

Անցած շաբաթ նման միջոցառումներ իր ծրագրում ընդգրկել էր քաղաքապետարանը, որտեղ տեղի ունեցան Քանաքեռ-Զեյթուն, Ավան, Նոր Նորք համայնքներում եւ կենտրոնի որոշ մասերում: Մասնակցում էին զինծառայողներ, ուսանողներ, դպրոցականներ, քաղաքապետարանի աշխատակիցներ եւ այլք: Այդ օրը մաքրվեցին դպրոցների տարածքները, փողոցները, հուշակոթողները, եւ խոսացան, որ հաջորդ շաբաթ կարգի կբերվեն համայնքների բակային մասերը:

Փոքրիկ շրջանի սահմաններում փորձեցի բնակիչներից տեղեկանալ, թե որքա՞ն երկար կդիմանվեն մեր իսկ ձեռքերով մաքրված, բարեկարգված տարածքները: Չէ՞ որ միամսյակն ավարտվելուն պես ոգեւորությունը հետզհետե մարում է, եւ կամաց-կամաց մեզ ամեն օր սկսում են ողջունել «հոգեհարազատ» տասարանները:

Զեմմա Գրիգորյան, տնային տնտեսուհի. – Այս տարվա միամսյակն զգալիորեն տարբերվում է նախորդից, որովհետեւ կան տեղամասեր, որտեղ միամսյակի «ցունչն» անգամ չի զգացվում: Ինչ վերաբերում է մաքրված, բարեկարգված տարածքներին, ապա դրանք շատ երկար այդպես չեն մնա, որովհետեւ մենք՝ իմքներս, մեր առած գործը ջուրն ենք գցում՝ աղտոտելով շրջակա տարածքը:

Ասյա Վերդյան, զինաշխատող. – Այսօրվա մաքրված տարածքները մեկ, երկու օր հետո տեսնելու ենք նախկին վիճակում: Ստացվում է այսպես, այսօր մաքրում ենք՝ վաղը կեղտոտելու «ակնկալիքով»: Ես գտնում եմ, որ յուրաքանչյուր բնակիչ նախ պետք է սկսի իրենից եւ չնմանվի ուրիշներին: Քաղաքն անհրաժեշտ է մեր հարազատ տան պես պահել եւ նրան ոչ թե մեկ ամիս, այլ ամբողջ տարին նվիրել: Իսկ երեւանը տեսքից գցողներին էլ թող պատժեն ինչ-որ մեխանիզմների միջոցով:

Իսկ ահա Գուրգեն պապիկը լավատես է եւ գտնում է, որ ամեն ինչ լավ է լինելու:

Եկեք մի պահ մոռանանք միամսյակը եւ միշտ մաքուր պահենք մեր քաղաքը:

ԱՆՆԱ ԳՈՒԲԻՐՅԱՆ,
Ուսանողուհի

ԱԺ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախագահականի շարունակությանը զուգընթաց

Դեռ շարունակվում են նախագահական ընտրությունների, դրանց արդյունքների հետ կապված խոսակցություններն ու դժգոհությունը, մինչդեռ արդեն սկսվել է Աժ ընտրությունների նախապատրաստման գործընթացը:

Մարտի 5-ից հետո դեռեւս երկար շարունակվում էին անգամ դժգոհությունները՝ կապված նախագահական ընտրությունների առաջին փուլի արդյունքների հետ: Օրերս էլ պարզ կդառնա նախագահի թեկնածու Ստեփան Դեմիրճյանի Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումի ճակատագիրը:

Ըստ էության կարելի է արձանագրել, որ, գլոբալ մակարդակով, նախագահական ընտրություններն ու դրա հետ կապված գործընթացները չեն ավարտվել:

Սակայն, միեւնույն ժամանակ, Աժ ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման հիմնական միջոցառումներից մի քանիսն իրականացվել են: Մասնավորապես, համաձայն յուրաքանչյուր տարածքում հաշվառված ընտրողների թվի՝ կազմավորվել եւ համարակալվել են ընտրատարածքները, սահմանվել եւ հրապարակվել են համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացվել Աժ համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերով պատգամավորության թեկնածուների առաջադրման փաստաթղթերը: Ինչպես նաեւ մինչեւ մարտի 26-ը հանձնվեցին պատգամավորության թեկնածուների առաջադրումը պաշտպանելու պաշտոնաթերթիկները՝ ստորագրահավաքը կազմակերպելու համար:

Արդեն իսկ կուսակցությունների, դաշինքների եւ նախաձեռնող խմբերի կողմից ԿԸՀ կամ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացվում Աժ համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերով պատգամավորության թեկնածուների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Մինչեւ ապրիլի 10-ը պարզ կդառնա, թե ովքեր կներկայացնեն անհրաժեշտ փաստաթղթերը: Իսկ ապրիլի 15-ից մինչեւ ապրիլի 20-ը, ժամը 18-ը տեղի կունենա, այսպես ասած, Աժ ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրածների գրանցումը:

Ա. Հ.

«ԵՐԿՐԱՄԱՍ»

Նահանգապետի խոսքերի «կենդանի հուշարձանը»

Ռուսաստանի հարավի հայերի «Երկրամաս» թերթը տեղեկացնում է, որ մարտի 17-ին՝ գաղթի խնդիրներին նվիրված խորհրդակցությունում Կրասնոդարի երկրամասի նահանգապետ Ալեքսանդր Տկաչովի ունեցած ելույթի տարելիցի նախօրեին, Աբինսկում կանգնեցվել է նրա խոսքերի «կենդանի հուշարձանը»: Այն կազմված էր մեխքեցի թուրք մի խումբ երեխաներից, որոնք բռնել էին մեկ մարդաբոյ բարձրությամբ ոսկիկանական ծխակոշիկի ներքան: Վրան գրված էր «Յան-ով, ձե-ով, ովիլի-ով եւ օղլի-ով ավարտվող ազգանունները եւ դրանց տերերն անօրինական են: Made in Tkachev»:

Նահանգապետի այդ խոսքերը ժամանակին հրապարակեցին մի շարք կենտրոնական լրատվամիջոցներ, բայց ինքը՝ Տկաչովը, հետագայում հրաժարվեց հեղինակային իրավունքից եւ հրապարակումներն անվանեց «սխալ»:

Կուբանի ամենատարեց հայուհին ապրում է Սոչիում

Սոչիից ոչ հեռու գտնվող Պրիմերնոյե ավանում է բնակվում Գոհար Մելքեթյանը, որի 100-ամյակը լրացավ վերջերս: Ռուսաստանի հարավի հայերի «Երկրամաս» թերթը գրում է, որ մինչեւ 63 տարեկան հասակը նա բանջարաբուծությամբ է զբաղվել «Ադլերսկի» խորհրդային տնտեսությունում:

Իր երկարակեցությունը Գոհար Մելքեթյանը բացատրում է նրանով, որ մոտ է եղել բնությանը, աշխատել է առավոտից երեկո եւ ապրել մեծ ու համերաշխ ընտանիքում՝ որդու, հարսի, երկու թոռների եւ ծոռան հետ: Նրա կարծիքով, նման պայմաններում ծերանալու համար ժամանակ չի մնում:

ԼՂՀ. Ընտանիքներին աջակցելու նպատակով

Ամերիկյան AMCOR կազմակերպությունը շուրջ 6 տարի միկրովարկային ծրագիր է իրականացնում ԼՂՀ-ում, որոնց նպատակն է նորանկախ հանրապետությունում խթանել մանր ու միջին բիզնեսի զարգացումը: Ցածր տոկոսադրույքներով վարկերը տրվում են տարբեր ծրագրեր իրականացնելու, այդ թվում նաեւ գյուղատնտեսական մթերքների արտադրություն կազմակերպելու համար: Ընդ որում, ծրագիրն առ այսօր նախատեսված էր միայն կանանց վարկավորելու համար: Անցած տարիներին AMCOR-ը Ստեփանակերտի իր գրասենյակի միջոցով վարկեր է տրամադրել ավելի քան 14000 հոգու՝ շուրջ 1 մլրդ 300 մլն դրամ ընդհանուր գումարով:

«Արեգակ». այսպես են Ստեփանակերտում կոչում վերոհիշյալ ծրագիրը: Վարկային այս նախաձեռնությունը արդարացրել է իրեն, ինչի մասին ընդհանուր տեսակետով վկայում են թե՛ մայրաքաղաք Ստեփանակերտում եւ թե՛ հանրապետության շրջաններում: Ոչ փոքր թվով վարկառուներ, այս ծրագրի շնորհիվ, այսօր բիզնեսի տարբեր ոլորտներում շոշափելի հաջողությունների են հասել:

«Արեգակ»-ը մտադիր է առաջիկայում ավելի ընդգրկուն ծրագիր իրականացնել՝ ընդլայնելով վարկառուների քանակը եւ վարկային գումարի ծավալները: Օրերս, գտնվելով Ստեփանակերտում, ծրագրի տնօրեն Մարիամ Եսայանը նշել է, որ իրենք նպատակ ունեն այդ կերպ մեղմել սոցիալական ծանրաբեռնվածությունը հանրապետությունում: Այդ նպատակով այսուհետեւ վարկեր տրամադրվելու են ոչ թե պարզապես արցախցի կանանց, այլ ընտանիքներին, որոնք կարող են փոխառու միջոցները շրջառության մեջ դնելով՝ բարելավել իրենց սոցիալական վիճակը:

Ըստ Մ. Եսայանի, միկրովարկային ծրագրի երկու փուլ անցած անձանց կտրվեն արտոնություններ: Մասնավորապես, առաջին 6 ամսում նրանք մուծելու են միայն տոկոսները, որից հետո՝ նոր միայն մարվելու է մայր գումարի շահաբաժինը: Հատկանշական է, որ «Արեգակ»-ը փոխառուներից չի պահանջում նյութական գրավ, եւ վարկառուները գործնականում չեն չարաշահում այդ վստահությունը:

Իսկ ամենակարեւորն այն է, որ նոր ծրագրով ընտանեկան փոխառությունները կտրամադրվեն ոչ թե նախկինի պես 300-500 ԱՄՆ դոլարի, այլ մինչեւ 3000 դոլարի սահմաններում, որը հնարավորություն կտա վարկառուներին ավելի մեծածավալ տնտեսական ծրագրեր իրականացնել:

ԳԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

«Հայաստանի ամենամեծ արժեքը նրա ժողովուրդն է»

Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալությունը (ATDA) եւ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող Միջազգային գործադիր ծառայության կորպուսը (IESE) կազմակերպել էին զբոսաշրջության օտարերկրյա մասնագետների հերթական երրորդ ճանաչողական այցը Հայաստան: Մեր երկրից իրենց տպավորությունները լրագրողներին հայտնեցին 7 օր այստեղ գտնվող մեկ տուրգործակալության ղեկավար եւ մեկ լրագրող: Եվս մեկ տուրգործակալության ներկայացուցիչ արդեն մեկնել էր եւ չէր մասնակցում «Հայաստան տեղեկատվություն» կենտրոնում կազմակերպված մամուլի ասուլիսին:

Շվեդական «Լինդենսոն թրավել» ընկերության ղեկավար Մարգոս Լինդենսոնը եւ ամերիկյան «Ուորլդ թրավելերս նյուս» զբոսաշրջային հանդեսի թղթակից Պիտեր դե Ստեֆանոն համակարծիք էին, որ Հայաստանի ամենամեծ արժեքը նրա ժողովուրդն է: Նրանք տպավորված էին մարդկանց հետ շփումներից եւ հյուրասիրությունից, ինչի մասին խոսացան պատմել եւ գրել հայրենիք վերադառնալուց հետո: Լինելով Հայաստանի մի շարք բնակավայրերում՝ Եղեգնաձոր, Խոր Վիրապ, Երեւան, Սեւան, Դիլիջան, Իջեւան, մեր հյուրերը գլխավոր թերությունը համարեցին անհրաժեշտ ենթակառուցվածքների դեռեւս չձեւավորված լինելը: Մասնավորապես մարգերում դեռեւս հյուրանոցների չափանիշները չեն բավարարում միջազգային զբոսաշրջության պահանջներին:

Մամուլի ասուլիսի ժամանակ տեղեկացվեց նաեւ, որ նախատեսված է եղել ավելի մեծ թվով օտարերկրյա տուրգործակալությունների ներկայացուցիչների ժամանումը Հայաստան, որոնք, սակայն, չէին եկել իրական պատերազմի պատճառով:

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

Էջաթիկ

ԴԱՏԱՐԱՆ

Եթե հենց այնպես 150 դոլար են տալիս

Ապա կարելի է նաեւ հայրենիքին դավաճանել...

Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում երեկ շարունակվեց Ադրբեջանի օգտին լրտեսության մեջ մեղադրվող ՀՀ 4 քաղաքացիների դատաքննությունը: Կրկին ցուցմունքներ տվեց ամբաստանյալ Ալեքսանդր Գասպարյանը: Նախաքննական ցուցմունքում նա նշել է, որ «Կրասնի մոստի» «չայխանայում» աշխատող Ալպաշան իրեն առաջարկել է Բաքու գնալ եւ այնտեղ գումար վաստակել: Իր ցուցմունքի այս կետն Ալեքսանդրը չի հիշում, նա հիշատակում է Ղազախի անունը:

Նախաքննական ցուցմունքների եւ ներկա պատասխանների հակասականությունը շարունակվում է: Ալեքսանդրի պաշտպան Ջուլիետա Հարությունյանը պնդում է, որ դրա պատճառը նախաքննության ժամանակ փաստաբանի բացակայությունն է: Հարցաքննությունը, սակայն, կայացել է 2002 թ. օգոստոսին, եւ եթե նույնիսկ ցուցմունքների տեքստը կազմվել է օրինախախտմամբ, ապա մեղադրյալն այդ ընթացքում գրավոր բողոք ներկայացնելու բավարար ժամանակ ուներ:

Ալեքսանդրի երեւութական միամտությունը, թե իբր թյուրիմացաբար կամ խաբեության արդյունքում է հայտնվել Բաքվում, անհետանում է փաստերի ճնշման տակ: Ալպաշայի հետ հանդիպելու համար դեպի Ադրբեջան ուղեւորվելիս նա իր հետ վերցրել է զինգրությունը՝ ինչո՞ւ էր անհրաժեշտ այն: Իր կենսագրության մի հատվածով Ալեքսանդր Գասպարյանն ադրբեջանական գաղտնի ծառայությունների համար միանգամայն որոշակի հետաքրքրություն է ներկայացրել իբրեւ հայկական զորամիավորումների պաշտպանական կառույցների մասին ինֆորմացիայի տիրապետող անձնավորություն: Նրանից մասնավորապես հետաքրքրվել են Հորադիզի «սանցիայի» մասին, ուր կռվել է արցախյան պատերազմի տարիներին: Էլի մի քանի զրույցներից հետո Բաքվից վերադարձից երկու օր առաջ նրան համապատասխան սպայականով 150 դոլար են վճարել:

Արդյոք նյութական կարիքը չի՞ եղել պատճառը, որ Ալեքսանդրը լուռումունջ հավաքագրվել է լրտեսների ցանկում: «Ո՛չ, պնդում է մեղադրյալը, բայց եթե մարդ կարիքի մեջ է, ու նրան հենց այնպես 150 դոլար են տալիս, ո՞վ չի վերցնի: Ես չէի էլ պատրաստվում ինֆորմացիա տալ», ասում է Ալեքսանդրը, «չգիտակցելով», որ հենց Հորադիզի սնորաբաժանման մասին իր հաղորդած տվյալներն ինֆորմացիա են:

Երեկվա դատավարության ընթացքում սկսվեց նաեւ Ալեքսանդրի հարազատ եղբոր՝ Էդգար Ֆիլկովի հարցաքննությունը: Նա ամուսնացել է լրտեսական ցանցն ընդլայնելու կոչված Նինա Շիլինայի՝ իր եղբոր նախկին հոմանուհու հետ: Մասնագիտությամբ ռադիոտեխնիկ է: Նինայի հետ սկսել է հանդիպել հարազատներից գաղտնի՝ 1995 թ. թե 1996 թ. ծմռանը: «Ինձ հետաքրքիր է լինել այդ կնոջ հետ», ասում է Էդգար Ֆիլկովը իրենից 22 տարի մեծ կնոջ մասին: Նինան պատմել է, որ Հայաստանում հայտնվել է սումգայիթյան իրադարձություններից հետո: Իր հարեւանները հայեր են եղել, եւ նրանց հետ պատահածը վախեցրել է իրեն: Սումգայիթի տունը փոխանակել է Ջերմուկ քաղաքի մի բնակարանի հետ, հետո այն էլ վաճառել՝ իբր Ուկրաինա գնալու համար: Իրենց հանդիպումների ընթացքում Նինան բնակվել է հորքրոջ աղջկա տանը՝ Եղեգնաձորում, բայց թե ինչու հենց այստեղ, ինքը չի հարցրել: Ամիսը մեկ-երկու անգամ ինչ-որ տեղ էր անհետանում ու վերադառնում: Ասում էր, թե գնում է Վլադիվոստոկ՝ տղային տեսնելու: Իրենց հարաբերությունները խորացել են Ալեքսանդրի բանտում գտնվելու ժամանակ: Իր ասելով, «հավատարիմ» է Ալեքսանդրից ու Նինայից անկախ եւ այդ ժամանակ է միայն իմացել, որ նրանք եւս աշխատում են Ադրբեջանի գաղտնի ծառայությունների հետ:

Նինայի հետ մտերմության տարիներին ինքը նաեւ չի հետաքրքրվել, թե որտեղից է Նինան ծեռք բերում մշտական ուղեւորությունների գումարները: Նրա հետ մեկնել են Թբիլիսի, ուր իբր Նինան հրաժեշտ տալիս փող ստանար: Այդ գումարը նրան են հանձնում ոմն Յուրա եւ Էդիկ, որոնց Նինան ներկայացնում է իբրեւ իր ընկերների: Հետո Յուրան Էդգարին առաջարկել է Նինայի փոխարեն ստորագրել հրաժեշտ տալու վերաբերյալ ստացականը: Ինքն այդ պահին ուշադրություն չի դարձրել, թե ինչ է գրված ստացականի վրա: Առավոտյան է միայն կարդացել: Ստացականի վրա նշված էր, թե ինքը Արցախի զորամիավորումների մասին ինֆորմացիա է տրամադրել եւ փոխարենը 300 դոլար է ստացել: Յուրան առաջարկել է աշխատել իրենց հետ, խոստանալով, որ լավ կլինի: Իսկ եթե Էդգարը չհամաձայնի ու կատարվածի մասին ինչ-որ տեղ բերան բացի, ողջ ընտանիքի համար վատ կլինի: Սպառնացել են նույնիսկ ստացականն ուղարկել ՀՀ պաշտպանության նախարարություն: Այսքանից հետո էլ ինքը չի «կռահել», թե ովքեր են իր հետ խոսողները: Նինան հանգստացրել է, ասելով, թե այդ մարդիկ «միայն թերթեր են ուզում»: Ինքն «ընդամենը» ենթադրել է, որ հասարակ ադրբեջանցիներ են եւ ոչ հատուկ ծառայությունների աշխատակիցներ: Իսկ եթե հայկական թերթեր տալու համար վճարում են, ինչո՞ւ չանել այդ հասարակ գործը: Բայց Էդգարը չի բացատրում, թե այդ ինչո՞ւ, ի՞նչ մղումներով այդ հասարակ մարդիկ մեծ ծախսեր անելով Ադրբեջանից հասել են Վրաստան՝ բացառապես հայկական թերթեր ծեռք բերելու համար: Հետո՝ 2000 թ., թե 2001 թ. բաժանվել են Նինայից, առանձին ապրել, հետո նորից միացել են եւ միասին վարձով ապրել Արտաշատում: Թե ինչո՞ւ հենց այստեղ, դարձյալ չի բացատրում: Ապրում էին այն փողով, որ երկու ամիսը մեկ «աշխատում» էր Նինան՝ 300 դոլար:

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԻԵԼՅԱՆ

ՕՐԱԽՆԴԻՐ

«ՁԼՄ մասին» օրենքը լուրջ վերափոխումների կարիք ունի

Սկիզբը էջ 1

Կարծում ենք, որ անընդունելի է հոդված 6-ում ամրագրված լրագրողի հավատարմագրման կարգը, որը պետք է սահմանեն հավատարմագրող պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները: Մեր համոզմամբ, դա չպետք է լինի այդ կառույցների «ներքին ակտի» հիման վրա, քանի որ դա էապես խոչընդոտում է տեղեկատվություն ստանալու լրագրողի հնարավորությանը եւ կամայականությունների դաշտ բացում տվյալ կազմակերպության կամ պետական մարմնի կողմից տեղեկատվություն տրամադրելու հարցում: Ներքին ակտի հիման վրա օրենքի նախագծում ներկայացվող պահանջները, փաստորեն, հաստատում են վերոնշյալ մտավախությունները: Այս հոդվածն ամբողջովին վերափոխման կարիք ունի: Հիմնական հավատարմագրման հարցի առնչությամբ անհրաժեշտ է սահմանել լրագրողական դաշտի եւ օրենքի հեղինակների փոխհամաձայնեցված օրինակելի կարգ, որով պետք է ղեկավարվեն բոլոր պետական մարմիններն ու այլ կազմակերպությունները: Այս հոդվածի 6-րդ ենթակետում անհասկանալի է նաեւ, թե ինչ է նշանակում «ողջամիտ ժամկետը», որը նախատեսված է մամուլի ասուլիսների վայրի եւ ժամանակի մասին տեղեկացնելու համար:

Խոսքի ազատության չարաշահման անթույլատրելիության մասին 8-րդ հոդվածի 3-րդ կետն իր ենթակետերով ընդհանրապես անհասկանալի է: Այդ նույն «հայերենով» այս դրույթն ամրագրված էր նախկին տարբերակի 11-րդ հոդվածում, ինչն իսկապես հայերեն վերաշարադրելու մեր առաջարկը, փաստորեն, անտեսվել է:

Սկզբունքային առարկություն էինք ներկայացրել (որը հաշվի չի առնվել) հերքման եռամսյա ժամկետ սահմանելու առնչությամբ: Այդ ժամանակահատվածում իրադարձությունները կարող են արմատապես փոխվել եւ այն, ինչ համապատասխանում էր իրականությանը երեք ամիս առաջ, կարող է չհամապատասխանել երեք ամիս հետո: Այստեղ կարելի է բավարարվել առավելագույնը 7 կամ 10 օրվա ժամկետով: Նույն 9-րդ հոդվածի 1-ին կետում նշված «եթե տարածված տեղեկատվությունն արատավորել է անձի պատիվը, արժանապատվությունը եւ բարի համբավը» նախադասության մեջ անհրաժեշտ է ավելացնել «հանիրավի» բառը: Այսինքն՝ եթե տարածված տեղեկատվությունը զրպարտություն է կամ բյուրիմացության հետեւանք: Այլապես անձն ինքը կարող է թույլ տալ իր պատիվը, արժանապատվությունը եւ բարի համբավն արատավորող գործունեություն եւ այդ մասին տեղեկատվություն հրապարակող լրատվամիջոցից պահանջել հերքում:

Նույն հոդվածով նախատեսվում է հերքման հետ մեկտեղ պատասխանի հրապարակման իրավունք: Միաժամանակ նշվում է, որ «հերքման պահանջը բավարարված է համարվում պատասխանի հրապարակմամբ»: Այդ դեպքում անհասկանալի է, թե ինչու է դրանից մի փոքր վերեւում ասվում, որ անձը հերքման պահանջի հետ իրավունք ունի պատասխանի հրապարակում պահանջելու: Այստեղ պարզապես անհրաժեշտ է գրել, որ անձն ունի հերքման կամ պատասխանի իրավունք:

Եվ վերջապես, ֆինանսավորման աղբյուրների թափանցիկության մասին: Մեր կողմից առաջարկվել էր այս հոդվածը հանել, քանզի կարող է գործիք հանդիսանալ լրատվամիջոցների վրա ճնշում գործադրելու համար: Արդարադատության նախարարության կողմից, ցիտ է, որոշակի մեղմացում արվել է: Նախկին տարբերակում պահանջվում էր նշել լրատվամիջոցի համախառն եկամտի եւ ընդհանուր ծախսերի գումարները, եկամտի աղբյուրները, եկամտի չափն ըստ եկամտի յուրաքանչյուր աղբյուրի, փաստացի կատարված ծախսերի չափերն ըստ առանձին ուղղությունների: Այժմ պահանջվում է հրապարակել միայն համախառն եկամտի եւ դրա կազմում նվիրատվությունների մասնաբաժնի չափերն ու նվիրատվություններ կատարած ֆիզիկական անձանց անունները եւ իրավաբանական անձանց անվանումները: Սակայն վերջին՝ անվանումներ հրապարակելու պահանջը շարունակում է սպառնալիք հանդիսանալ լրատվամիջոցների համար: Հարկ ենք համարում ընդգծել, որ այս հոդվածը դանդաղ գործողության ակն է եւ անհրաժեշտ է կամ ընդհանրապես հանել, կամ հանել գոնե 2-րդ՝ անուններ եւ անվանումներ հրապարակելու մասին կետը:

Այս ամենով հանդերձ, կցանկանայինք արձանագրել, որ որոշակի առաջընթաց, նախորդող օրենքի նախագծի համեմատ, ներկայացված փաստաթղթում առկա է: Սակայն դա չի նշանակում, որ այս տեսքով օրենքը կարելի է ընդունել: Այդ պատճառով էլ անհրաժեշտ են ՁԼՄ-ների միասնական, բայց ոչ քաղաքականացված մոտեցումն ու գործնական քայլերը նախագիծը վերափոխելու ուղղությամբ:

Թաղային ոստիկանները կաթ, մածուն չե՞ն սիրում

Արդեն մի քանի տարի սպառողներս ենք ընտրում ումից եւ որտեղից գնել կաթնամթերք: Տարիներ շարունակ Նորքի զանգվածի մեր բակի բնակիչները (ինչպես քաղաքի ուրիշ շատ բակերում) շաբաթական երկու անգամ պատվիրած կաթնամթերք են գնում ու օգտագործում մոտակա գյուղի մի սպասարկողից եւ շատ գոհ են: Սակայն արդեն մեկ ամիս է, ինչ հայտնվել է թաղային ոստիկանը եւ ամեն կերպ փորձում է արգելել կաթնամթերքի առքուվաճառքը մեր բնակարաններ:

Զարմանալի է, որ թաղային ոստիկանը թաղամասում երեկոյան ժամերին կանգառներում, մուտք բակերում եւ շենքերի միջնամասերում հավաքվող, հաշիվ մաքրող տղաներին հետեւելու եւ հսկելու փոխարեն, որով էլ ինչ-որ չափով կանխած կլինի հանցագործությունները, բան ու գործը թողած ընկել է կաթ-մածուն մատակարարողի հետեւից ու պնդում է, որ դա իր գործն է, երբ ուզի՝ կարգելի ու...

Այդ փաստն ապացուցում է մի բան, որ թաղային ոստիկանները կաթնեղեցից ալերգիա ունեն, եւ այդ հիվանդությունը բուժելու համար որոշակի գումար է պետք:

Թաղային ոստիկաններից ոմանք իրենց անգործությամբ ու իրենք իրենց վերապահած իրավունքներով պարզապես գլխացավանք են դարձել բնակիչների համար:

Մ. ՄԱԿԱՐՅԱՆ

Ծեծկռտուք դատարանում

Երեկ Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում կատարվածը թերեւս կարելի է դասել արտակարգ պատահարների շարքում: Դատարանը քննում էր քաղաքացիական գործ՝ Արշակ Խաչատրյանի գույքային պահանջի հայցը Ասոն Խաչատրյանի դեմ: Դատական նիստի ավարտին մոտ հայցվոր ու պատասխանող կողմերը ծեծկռտուքի բռնվեցին: Հետաքրքրական է, որ առաջամարտիկները 2 կողմից էլ կանայք էին: Նար-Դոսի հերոսուհին՝ գիժ Հռոմսիմը («Թե ինչպես շաքարամանից 1 կտոր շաքար պակասեց») կնախանձեր այն արագաշարժությանն ու ճարպկությանը, որի շնորհիվ կանայք եռանդուն ճանկռտում էին իրար, արյունոտելով մեկը մյուսի աչք ու երես, պատռելով թանկարժեք կաշվե բաճկոն ու զգեստ: Կնախանձեր նաեւ նրանց հայախոսության հարուստ բառաֆոնդին, որի օգնությամբ կանայք առատորեն նախշում էին իրար՝ միմյանց կյանքի ինտիմ մանրամասների լավատեղյակություն ցուցաբերելով:

Հետաքրքրական է, որ միմյանց ծվատելու գործընթացը մեկնարկեց նախագահող դատավորի ու հայցվոր կողմի փաստաբանի ներկայությամբ: Ի դեպ, հենց վերջինիս նույնպես պատասխանող կողմի գրոհայինները լուսանկարների արժանացրին:

Դատը նախագահող Գայանե Կարախանյանին ի վերջո օգնության հասան ոստիկանները: Անզուսպ կանանց ՆԳ բաժին տարան՝ խուլիգանական արարքի համար վարչական տույժի ենթարկելու:

Կ. Դ.

Երբ երկար է ձկան ճանապարհը

– Հենց նոր բերեցին, տես, թե ինչ ընտիր ծուկ է:

Յուրաքանչյուր ձկնավաճառ գովում է իր ապրանքը, իսկ հաճախորդների ընտրության հնարավորությունը մեծ չէ: Կողք-կողքի շարված արկղների ծուկը նույն որակն ունի: Եթե նույնիսկ ծուկը հենց նոր են բերել տուկա, դարձյալ քարշ չէ: Իսկ եթե մի քանի օր էլ վաճառվում է, ապա պարզ է դրա որակը: Սեւանա լճից հանրապետության որեւէ բնակավայր հասնելը մի քանի ժամվա ճանապարհ է, թվում է, թե ծուկը որսալուց հետո հաջորդ կարեւոր քայլը տուկա հասցնելն է: Սակայն լճից մինչեւ հանրապետության տուկաներ ծուկ հասցնելն օրեր է տեւում, որի ընթացքում երեւի շատ-շատերն են շահում, սակայն տուժում են գնորդները:

Ծուկը (նկատի ունենք սիգը) այն սննդամթերքն է, որը հանրապետության բնակչության մեծամասնությանը եւ մատչելի է, եւ օգտակար: Չի ներմուծվում, եւ հույս ունենք, որ էկոլոգիապես էլ մաքուր է: Հետեւաբար դրա նշանակությունն ավելի է կարեւորվում: Սակայն քանի որ տուկա է հասնում ուշացումով, հնանում է եւ դառնում երբեմն նույնիսկ վտանգավոր: Շատ բիզնեսը մեծ շահույթներ է բերում: Սակայն այդ բիզնեսում կան օղակներ, որոնք շահի հետեւից ընկած ուշացնում են ծուկը տուկա հասցնելը: Շուկայում էլ ձկան վաճառքը վերահսկվում է՝ դարձյալ փող աշխատելու նպատակով: Սակայն որակը ոչ ոք չի վերահսկում:

Ա. Ա.

Արա Աբրահամյանի եւ Անդրանիկ Միհրանյանի հանդիպումը ՀՌԱԿ ակտիվի հետ

Հայաստանում այս եւ առաջիկա տարիներին ՀՌԱԿ-ի հետ իրականացնելիք ծրագրերի շուրջ մանրամասնյալ բացատրություններ տալու եւ այդ կապակցությամբ առաջարկություններ լսելու նպատակով Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության Հանրապետական վարչությունը հինգշաբթի օրը կազմակերպել էր Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի եւ նույն միության ղեկավար խորհրդի անդամ Անդրանիկ Միհրանյանի հանդիպումը ՀՌԱԿ Երեւանի ակտիվի հետ, Թեթեյան կենտրոնում:

Ինչպես ներածական խոսքում ասաց ՀՌԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանը, սկզբնապես որոշվել էր հանդիպմանը հրավիրել ՀՌԱԿ-ի հանրապետական ողջ ակտիվին, սակայն վաս եղանակի պատճառով կարողացել էին ներկա գտնվել միայն մայրաքաղաքի մոտակա շրջաններից եկողները: Ռ. Միրզախանյանը հակիրճ ներկայացրեց օրվա հյուրերին, ինչպես նաեւ հանդիպմանը ներկա գործարար, Երեւանի DCA եւ JCA գործարարների տնօրեն-

ների խորհրդի նախագահ, Աժ առաջիկա ընտրություններում ՀՌԱԿ համամասնական ցուցակում 2-րդ հորիզոնականը զբաղեցնող Գագիկ Աբրահամյանին, եւ անդրադարձավ նույն օրն առավոտյան Գիտությունների ազգային ակադեմիայում կնքված հնգակողմ պայմանագրին, որի նպատակն է առաջին հերթին օգնության հասնել խստաշունչ ձմեռվա հետեւանքով բերք ստանալու դժվարության առաջ գտնվող գյուղացիությանը:

Արա Աբրահամյանը մանրամասնորեն ներկայացրեց Ռուսաստանի հայերի միության եւ ՀՌԱԿ-ի համախոհությամբ ստեղծված այդ ծրագրի կետերը՝ թունաքիմիկատների մատակարարում գյուղացիությանը, Հայաստանում յուրաքանչյուր դպրոցի համակարգչային առնվազն մեկ դասարանով ապահովում, Հայրենական մեծ պատերազմի վետերաններին եւ արցախյան հերոսամարտի հաշմանդամներին տրվելիք օգնություն, ԼՂՀ կառավարության միջոցով Արցախում առաջնահերթ մի շարք ծրագրերի ֆինանսավորում եւ, վերջապես, մանր ու միջին գործարարության խթանում: Նա մեկ անգամ եւս հավաստիացրեց, որ Ռուսաստանի հայերի միության եւ առաջիկայում կազմվելիք Հայերի համաշխարհային միության գլխավոր նպատակն է լինելու ամրապնդել հայոց պետականությունը, նպաստել նրա բարգավաճմանը:

Այդ խոսքերի տեսական հիմնավորումը, բնականաբար, ներկայացրեց հայտնի քաղաքական մեկնաբան Անդրանիկ Միհրանյանը: Նրա խոսքերով, այժմ երբ Հայաստանն ունի պետականություն, այլեւս անհեթեթ է, որ սփյուռքում ապրող հայերը զեստոյական մտածողությամբ առաջնորդվեն: Անկախ պետականությունը սփիռում է բոլորովին այլ, ավելի բաց մտածողությամբ մոտենալ հարցերին եւ որոշել առաջնահերթություններն ու աշխատել դրանց իրականացման ուղղությամբ:

Հայերը Իրաքի ռազմավարական կենտրոն Բասրայում

Իրաքյան պատերազմի սկզբից ետեւ անգլո-ամերիկյան կոալիցիան մեծագույն ակնկալիք ուներ, թե իր զորքերն Իրաքի Բասրա քաղաքում կհանդիպեին գրկաբաց ընդունելության եւ քաղաքի գրավումն ընդամենը ժամեր կխլեր: Նրանց համար դա պարզապես հաճելի պատրանք էր, որը թույլ էր տալիս մտածել Իրաքի մյուս հատվածներում զինված ուժերի դիմադրության թուլացման եւ կայծակնային պատերազմի իրականացման մասին:

Արդեն 10 օրից ավելի քաղաքն ուժգին դիմադրություն է ցույց տալիս՝ ճախողելով Մ. Նահանգների ռազմական պլանները, որոնցում Բասրայի գրավումը առաջնային տեղ է բռնում՝ ուղիղ ճանապարհով Բաղդադ ներխուժելու համար:

Բասրան մշտապես համարվել է Իրաքի կարեւորագույն քաղաքը՝ իրաքցիների սահմանին եւ Իրանին մոտ գտնվելու, ինչպես նաեւ Պարսից ծոց ելք ունենալու համար: Չնայած չէ, որ քաղաքը բազմաթիվ պատերազմների հետքեր է կրում: Եվ քանի որ մեծությամբ Իրաքի երկրորդ քաղաքն է, հետեւաբար մեծ է նրա գրավման ռազմավարական եւ հոգեբանական նշանակությունը: Չմոռանանք, որ Բասրան նաեւ նավթի խոշոր կենտրոն է:

Հինավուրց լեգենդի համաձայն, Բասրան կառուցվել է դրախտային այգիների հարեւանությամբ, ժամանակին եղել է ծաղկուն ու բարգավաճ քաղաք, ճանաչվել արմավի առատությամբ:

8-րդ դարում արաբները քաղաքն անվանեցին Բասրա: Իսկ եվրոպացիները անհամար ջրանցքների ու աշխարհագրական դիրքի պատճառով անվանում էին «Արեւելյան Վենետիկ»:

Քաղաքի բնակչության մեջ այսօր էլ մեծ թիվ են կազմում շիա իսլամականները, կան քրիստոնյաներ, հրեաներ, ասորիներ եւ ուրիշներ:

...Հիմա դառնանք հայերին: Թեեւ կարծիք կա, որ Բասրայում հայ գաղութ է եղել իսլամական տիրապետությունից շատ տարիներ առաջ, երբ հայերը առեւտրական գործերով Հայաստանից ճամփորդել են Միջագետք, Հնդկաստան եւ այլ երկրներ, դա քիչ հավանական է համարվում Բասրայի՝ ավելի ուշ շրջանում առաջացած լինելու փաստարկով: 7-րդ դարից սկսած հայերն ուղղակի կապեր են ունեցել Խուժստանի հետ, որի մասն էր կազմում Բասրան:

Ավելի ստույգ տեղեկությունների համաձայն, հայերը Բասրայում հաստատվել են XVI դարի վերջից եւ սկզբնական շրջանում բավականին սակավաթիվ են եղել: XVII դարի սկզբին Շահ-Աբբասի հրամանով մեծ թվով հայ բռնագաղթեցին Պարսկաստան, մասնավորապես՝ Սպահան: Նրանց մեջ մեծ թիվ էին կազմում ջուղայեցիները, որոնք էլ այնտեղ հիմնեցին Նոր Ջուղան եւ աշխույժ առեւտրական հարաբերություններ սկսեցին Հնդկաստանի հետ: Այսպես հայերը տարածվեցին Պարսից ծոցի առեւտրական կենտրոններում, որոնցից մեկն էլ Բասրան էր: Նրանք կազմեցին բարգավաճ գաղութ եւ մեծ դեր խաղացին քաղաքի զարգացման համար: Նրանց ձեռքն անցավ խոշոր առեւտուրը, եւ կարճ ժամանակամիջոցում նվաճեցին տեղացիների հարգանքն ու համակրանքը: Հայերը կենտրոնական դիրք գրավեցին ոչ միայն առեւտրի մեջ, այլեւ դիվանագիտական ասպարեզում: Իբրեւ առեւտրականներ Բասրա եկած անգլիացիները հիմնականում հայերին ընտրեցին հյուպատոսական փոխանորդ, գործակալ ու թարգմանիչ աշխատելու համար:

Բասրայում հայերի սիրված լինելու մասին է խոսում այն փաստը, որ թե՛ 1895 թ. հայկական ջարդերի, թե՛ 1914-1918 թթ. պատերազմի ժամանակ տեղի արաբ ազնվականները բարյացակամորեն վերաբերվեցին հայերին՝ որեւէ անհանգստություն չպատճառելով նրանց: Բասրայի հայ գաղութն ապրել է խաղաղ ու գոհացուցիչ կյանքով՝ հայեցի դաստիարակելով սերունդներին: Այնտեղ գործում է Ս. Աստվածածին եկեղեցին (կառուցման ստույգ թվականը հայտնի չէ, ենթադրվում է՝ 1753 թ.) որտեղ պահպանվում են 7 ձեռագրեր: Եկեղեցին ունի ազգային վարժարան, դպրոց, կալվածքներ, գերեզմանատուն, հիմնականում նյութական եւ բարոյական օժանդակություն է ստանում տեղի հայերից: Իսկ հայ կաթոլիկները եկեղեցի չունենալու պատճառով հաճախում են լատինական եկեղեցիներ:

Պատրաստեց
ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ

ՇԻՐԱԿ

5 պատգամավորական տեղերին՝ 54 հավակնորդ

Հաջորդ գումարման Ազգային ժողովի պատգամավորության 5 մեծամասնական տեղերի համար Շիրակի մարզում առաջադրված թեկնածուների թիվը հասնում է 54-ի: Մարզի 46-49-րդ ընտրատարածքների կենտրոնը Գյումրիում է, 50-րդինը՝ Արթիկ քաղաքում: Ընտրատեղամասերի եւ ընտրողների թվով ամենափոքր 46-րդ ընտրատարածքում նաեւ առաջադրվել են մյուսների համեմատությամբ ամենից փոքր՝ 6 թեկնածուներ, որոնց թվում, սակայն, Աժ ներկայիս երկու պատգամավորներ են: Եւս մեկական պատգամավոր նորից առաջադրվել են 47, 49 եւ 50-րդ ընտրատարածքներում: Վերջինում առաջադրվածների թիվն ամենամեծն է. այստեղ պատգամավորական մեկ տեղի համար հայտ է ներկայացրել 19 մարդ:

Շիրակի մարզում առաջադրված թեկնածուներից կուսակցականներ են 22-ը: Նրանցից 5-ը «Օրինաց երկրից» են, 3-ական՝ ՀՀԿ-ից եւ ՀՀՇ-ից: 2-ական կուսակցականներ ներկայացնում են ՀԿԿ-ն եւ ՀՌԱԿ-ը, 1-ական՝ ՀԺԿ-ն, ՀՅԴ-ն, ԺԴԿ-ն, «Ազգային միաբանությունը», ՍԻՄ-ը, «Հանրապետությունը» եւ Ագրարային կուսակցությունը: 54 առաջադրվածներից միայն մեկն է գեղեցիկ սեռի ներկայացուցիչ:

Ավանդական մշակութային օջախի շենքը՝ ոսկիկանատո՞ւն...

Ամեն ինչի ցուկայացման մեր ներկա պայմաններում շենքերի ու տարածքների շարունակվող օտարման գործընթացը երբեմն աղաղակող դրսեւորումներ է ունենում՝ պայմանավորված այս կամ այն չինովնիկի մերթ շահադիտական նկրտումներով, մերթ անգիտակ կամ անտարբեր գործելակերպով: Միգուցե կարող են լինել նաեւ պարզ մարդկային սխալներ, որոնք գոնե պետք է հնարավոր դեպքում ուղղվեն: Գյումրիում տարբեր պատճառներով վերջերս կոնֆլիկտային իրավիճակ է ստեղծվել երկու շենքերի շուրջ: Մեկը քաղաքապետարանի ու ԱԻՄ-ի մարզային կառույցի միջեւ է եւ վերաբերում է վերջինիս կողմից 1989 թվականից ի վեր քաղաքի կենտրոնում, Սայաթ-Նովա 2 շենքի առաջին հարկում վարձակալությամբ զբաղեցրած տարածքին, որտեղից կուսակցությանը դուրս մղելու փորձ է արվում ոչ առաջին անգամ: Եթե սա առայժմ տեղում լուծելի համեմատաբար «փոքր» խնդիր է (որի համար երկու կողմն էլ դիմել են դատարան), ապա մյուս դեպքը կառավարական կատարմամբ է, իր գոնե բարոյական կողմով բավական արտառոց է եւ առնչվում է ամբողջ քաղաքի շահերին: Խոսքը վերաբերում է Սիեր Մկրտչյանի անվան «Արագած» մարզամշակութային կենտրոնի շենքին՝ նախկին տեքստիլագործների մշակույթի պալատին, որը չգիտես ինչ որոշմամբ կամ գործարքով վերցվել ու տրվել է... ոսկիկանությանը: Վերջերս «Ասպարեզ» լրագրողական ակումբում հրավիրած մամուլի ասուլիսում այս մասին ահազանգ հնչեցրեց Գյումրու քաղաքապետարանի մշակույթի եւ երիտասարդության հարցերի բաժնի պետ Ասոն Մկրտչյանը:

Եթե խնդրին մոտենանք չոր ցուկայական տրամաբանության տեսանկյունից, ինչն էլ տվյալ դեպքում երեւի արվել է, կառավարությունում կամ նրա մի օղակում կայացված այս որոշումն առաջին հայացքից կարող է անխոցելի թվալ: Տեքստիլ կոմբինատը, որ հիմնադրվել է 1924 թվականին, խորհրդային տարիներին մի ամբողջ քաղաք պահող հզոր արտադրական միավորում էր, որն իր հաշվեկշռում ուներ նաեւ մանկապարտեզներ, հանրակացարանային շենքեր, հիշյալ մարզամշակութային համալիրը եւ այլն: Երկրաշարժից ու ԽՍՀՄ փլուզումից հետո իշխանությունների աչքի առաջ հիմնավորապես թալանվելով ու հետզհետե մարած փեթակի վերածվելով, «Գյումրիտեքստիլը» մի օր երեւի կանգնելու էր լուծարման հրամայականի ու իր ունեցած շենքերը կորցնելու փաստի առաջ: Տվյալ դեպքում ամբողջ հարցն այն էր, թե ում է բաժին հասնելու եւ ինչ հեռագա ճակատագիր է ունենալու խնդրո առարկա շենքը: Կառավարությունում վերջինիս երեւի նայել են որպես պարզ գույքի, որպես ապրանքի, առանց նրա բովանդակությանը նայելու: Եվ չհետաքրքրվելով ու հաշվի չառնելով քաղաքի համայնքի շահերը, մինչդեռ երկար տասնամյակներ պատմություն ունեցող այս հաստատությունը փաստորեն ամբողջ քաղաքինն էր եւ միշտ ծառայել է քաղաքին: Քաղաքապետարանի մշակույթի բաժնի պետի մոտեցմամբ, եթե պարտքերի խնդիր կար, «Գյումրիտեքստիլ» ընկերությունը գույքահարկի եւ հողի հարկի գծով քաղաքապետարանին պարտք է մոտ 14 մլն դրամ, ուստի թեկուզ այդ պարտքի փոխհատուցման տարբերակով կարելի էր կենտրոնի շենքը հանձնել քաղաքի հաշվեկշռին: Կենտրոնի խնդիրն իր կարեւորությամբ ավելի վաղ նաեւ ներկայացվել էր կուսակցական գործերով Գյումրի եկած վարչապետին, որը կառավարության անունից պատրաստակամություն էր հայտնել հնարավորության դեպքում աջակցելու դրա ցանկալի լուծմանը: Այդ լուծումը, սակայն, ցանկալի ու բանական թվացող տարբերակով չի եղել:

Պատմություն ունեցող ու գործող մշակութային օջախ փակելը արդեն իսկ հայավարի չէ: Իսկ ժողովրդի լեզվով տեքստիլի ակումբ կոչվող հաստատությունը այնքան խոր արմատներ ունի Լենինական-Գյումրու կենսագրության մեջ ու հոգեւոր կյանքում, այնպիսի ավանդույթների կրող է, որոնք ոչնակոխ անելը պարզապես մարդկային չէ: Ի դեպ, շենքը գտնվում է Սիեր Մկրտչյանի անունը կրող փողոցում, այն քաղամասում ու այն շենքի դիմաց, որտեղ անցել է մեր ժամանակի մեծ արտիստի մանկությունը: Տեքստիլի ակումբի բեմից են դեպի մեծ բեմեր ու կինոէկրան իրենց ճանապարհը սկսել Սիեր Մկրտչյանը, նրա անվանի կինոբեմադրիչ եղբայր Ալբերտ Մկրտչյանը: Այս միջավայրի ծնունդ ու հեռավոր տարիների արձագանք են «Հին օրերի երգը», «Մեր մանկության տանգոն»... Այստեղից նաեւ այլ արվեստագետներ են ծնունդ առել, նաեւ մարզիկներ, օլիմպիական չեմպիոններ: Այսօր էլ կենտրոնի գեղարվեստական ու մարզական խմբերում հարյուրավոր երիտասարդներ, պատանիներ ու աղջիկներ են պարապում, ասպարեզ դուրս գալիս: Եվ, վերջապես՝ սա հեռերկրաշարժյան Գյումրու մշակութային ու հասարակական նշանակության ընդամենը երկու մեծ եւ փոքր թե շատ նորմալ դահլիճներից մեկն է, առանց որի քաղաքի մշակութային կյանքն անկասկած կաղտատանա:

Շատերի նման ուզում ենք հավատալ, որ թույլ տրված սխալը որեւէ ընդունելի տարբերակով այնուամենայնիվ կուղղվի եւ մշակութային օջախը կշարունակի ծառայել մշակույթին: Նաեւ զերծ մնալով հետագայում որեւէ մեկի անձնական շահախնդրություններ առարկա դառնալու հնարավոր վտանգներից:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄ

Իրաքն իր բանակի գործողությունները համարում է հաղթական

Մինչ ամերիկյան զորքերի հրամանատարությունը զեկույցներ է ներկայացնում Իրաքում հաջող հարձակում ծավալելու մասին, Իրաքի իշխանությունները սեփական բանակի գործողությունները գնահատում են «հաղթական»: Լոնդոնի «Դեյլի թելեգրաֆը» մեջբերում է Իրաքի բանակի ներկայացուցիչ, գեներալ Հասիմ ալ Ռավիի հեռեալյալ խոսքերը. «Մեր թշնամիների ծրագրերը, որոնք հիմնված էին իրաքցիների կամքի սխալ գնահատման վրա, լիովին ձախողվեցին»:

Գեներալը հայտարարել է, որ «իրական ներխուժման 11-րդ օրը զավթիչների առաջխաղացումը կասեցվեց»: Նրա տվյալներով, անգլո-ամերիկյան դաշնակից ուժերը մեծ կորուստներ են կրում, ոչնչացվել են առնվազն 130 տանկ եւ զրահամեքենա: «Ամեն ինչ վկայում է նրանց պարտության մասին», մեկնաբանել է գեներալ Հասիմ ալ Ռավին:

Լրագրողների այն հարցին, թե պաշտոնական Բաղդադն ինչպես է վերաբերվում ամերիկացի եւ բրիտանացի զինծառայողների վրա արդեն մի քանի հաջող հարձակում կատարած մահապարտ ահաբեկիչներին, գեներալը պատասխանել է, որ «ջիհադն արդարացված հակազդեցություն է»:

Նրան համակարծիք է Իրաքի տեղեկատվության նախարար Մոհամմեդ Սայիդ ալ Սահաֆը: «Մարտի դաշտում պարտություն կրելով, մեր թշնամիները նահանջում են եւ շարունակում խաղաղ բնակիչների սպանությունները: Նրանք ավելի ու ավելի են մատնվում հիստերիայի», հայտարարել է նախարարը:

Պենտագոնի ներկայացուցիչներն արդեն խոստովանել են, որ Իրաքում սպասվում է երկարատեւ ու ծանր պատերազմ: ԱՄՆ ռազմավարության առնչությամբ վերջերս հաճախակի հնչող քննադատություններին ի պատասխան, դաշնակից անգլո-ամերիկյան ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ Թոմի Ֆրենկսը երեկ Քաթարում լրագրողներին ասաց, թե գործողությունները ընթանում են «ըստ ծրագրի» եւ թե հակաիրաքյան կոալիցիայի ուժերը «զգալի առաջխաղացում են կատարել»: Նա միաժամանակ հերքել է այն լուրերը, թե ինքը եւ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը տարաձայնություններ ունեն ռազմական գործողությունները վարելու հարցերում:

Ֆրենկսը հաղորդում է, որ երեկ գիշեր եւ առավոտյան օդային հարձակումների են ենթարկվել Բաղդադի արվարձանները, հրթիռակոծվել է քաղաքի կենտրոնում գտնվող նախագահական պալատը: Սադդամ Հուսեյնի համար եզակի բունկեր կառուցած ճարտարագետ Կառլ Էսսերը լրագրողներին ասել է, թե այդ աղաստանը չափազանց ամուր է: «Այն հնարավոր կլինի ոչնչացնել թերեւս միայն ատոմային ռումբով», պարծեցել է Էսսերը:

«Թեոդոր Ռուզվելտ» ավիակրից թռած 20 կործանիչներ Իրաքի հյուսիսում հարվածել են իրաքցիների հրետանու դիրքերին, հրամանատարական կետի բունկերներին եւ «զորքերի կուտակումներին»: Ամերիկացիները հայտարարել են, թե Իրաքում գրավել են ռիցինիումի արտադրության կենտրոն, որտեղ իբր տարբեր թունանյութերով փորձեր էին կատարել «Ալ Ղաիդայի» մասնագետները: Ռմբակոծումից կազմակերպության մարտիկների մի մասն սպանվել է, մի քանիսն էլ գերի են ընկել:

Բասրայի մոտ վիրավորվել են օտարերկրացի երկու լրագրողներ: Լիբանանի LBC հեռուստաընկերության աշխատակիցը վիրավորվել է կրծքից, իսկ ամերիկյան AP TV-ի թղթակիցը՝ ձեռքերից եւ ոտքից:

Պ. Ռ.

Ո՞վ կղեկավարի Իրաքը պատերազմից հետո

Մեր ընթերցողներին արդեն ծանոթ. Անգլիայում բնակվող անկախ լրագրող Գուիդո Դայերն մեր թերթին ուղարկած իր այս հոդվածում քննության է առնում պատերազմից հետո Իրաքի ղեկավարության հարցը: Ո՞վ կգա իշխանության գլուխ:

«Թույլերն ու վախկոտները Բաղդադ են գնում, իսկական տղամարդիկ՝ Թեհրան»: Այսպես են մտածում նեոպահպանողական շրջանակները Վաշինգտոնում: Նրանք ճաշկերույթների ժամանակ նույնիսկ բարձրաձայն են արտահայտում իրենց մտքերը, մոռանալով, որ Իրանում ապրող այդ իսկական տղամարդիկ կարող են լսել նրանց:

Իրանի իսլամական կառավարությունը բաղկացած է նախագահ Մոհամմադ Խաթամիի շուրջ համախմբված չափավոր բարենորոգիչներից եւ այաթոլլահ Ալի Խամենեյիի շուրջ համախմբված արմատական մոլլաներից, որոնք նաեւ վերահսկում են երկրի բանակն ու արտաքին քաղաքականությունը: Վերջիններս ահաբեկված են Իրանի արեւմտյան սահմաններում՝ երկրի ամենամեծ նավթադաշտերից ընդամենը մի քանի ժամվա հեռավորությամբ, ամերիկյան զորքի ժամանումից: Մանավանդ որ նախագահ Բուշը Իրանին «չարիքի առանցքի» երկրների ցուցակում է դրել: Այնպես որ ինչքան շատ դժվարությունների հանդիպի Մ. Նահանգները Իրաքում, այնքան ավելի լավ:

Իրաքում ամերիկյան զավթիչ վարչակարգի առաջ ծառացած մեծագույն խնդիրն այն է, որ տասնամյակներ շարունակ բնակչության 17 տոկոսը կազմող սուննիների ձեռքին են գտնվել կառավարությունն ու բանակը: Մեծամասնություն կազմող շիա արաբները հիմնականում իշխանությունից զրկված եւ համեմատաբար աղքատ են եղել: Ժողովրդավարական Իրաքի առաջացման պայմաններում բնական պիտի լիներ, որ բնակչության 2/3-ը կազմող այս խմբավորումը ստանձներ կառավարության ղեկը, սակայն քանի որ նրա անդամների համակրանքն առավելաբար Իրանում ապրող իրենց համախոհների կողմն է, դժվար թե Մ. Նահանգները հանդուրժի նման իրանամետ ռեժիմի հաստատումը հետպատերազմյան Իրաքում:

Ծոցի պատերազմի ավարտին ավագ Բուշը դրդեց Իրաքի հյուսիսային մասի քրդերին եւ հարավային մասի շիաներին ապստամբելու Հուսեյնի դեմ եւ երկուսին էլ դավաճանեց՝ պատշաճ չկանգնելով նրանց քայլերին: Քրդերը կարողացան իրենց ավանդական տարածքները պահպանել եւ համեմատաբար անկախ կյանք վարել, բայց շիաները կոտորվեցին եւ ճնշվեցին: Նրանցից հազարավորները կարողացան սահմանն անցնելով փախչել Իրան, որտեղ Իրաքի իսլամական հեղափոխության գերագույն խորհուրդն (ԻԻՀԳԽ) իր հովանու տակ վերցրեց նրանց: ԻԻՀԳԽ-ն հիմնադրվել է 20 տարի առաջ Իրան-Իրաք պատերազմի օրերին Իրանի իսլամական հեղափոխության հովանավորությամբ: Նրա ղեկավարն է այաթոլլահ Մոհամմադ Բաքիր էլ Հաքիմը, որը Թեհրանում է ապրում եւ որի նպատակն է իսլամական հեղափոխություն իրականացնել Իրաքում: Գերագույն խորհուրդը պաշտպանական ընդհատակյա լայն ցանց ունի Իրաքում եւ Իրանում: Իրաքի փախստականներից կազմված մոտ 10 հազարանոց Բադր զորաբաժանումը տարիներ շարունակ տեղակայված է սահմանամերձ շրջանում: Գերագույն խորհուրդը երբեք թույլ չի տա, որ Մ. Նահանգները իշխի Իրաքում:

1978 թվականի իրանյան հեղափոխությունը որոշ առումով ճանապարհ հարթեց դեպի աշխարհում առանց բռնության տեղի ունեցող ժողովրդավարական հեղափոխությունների իրականացումը, բայց պետք է ասել, որ այդ հեղափոխությունը շիաներ էր: Սկզբնական շրջանում քառասուն օրը մեկ անգեն մարդիկ փողոց էին դուրս գալիս սգալու շահի բանակի կողմից սպանված բողոքողների հիշատակը եւ ծաղրական խոսքերով հրահրում զինվորներին նորից սպանել: Զինվորները շարունակում էին սպանել զոհվելու պատրաստ քաղաքացիներին, մինչեւ որ իրանական բանակը վերջապես թափված արյունից «հագեցած» հրաժարվում է նեցուկ կանգնել ամերիկացիների կողմից պաշտպանված միապետին: Կատարածը խիստ արդյունավետ մարտավարություն էր եւ հավանաբար կրկնվի հարավային Իրաքի բոլոր շիաներ բնակչությունների՝ ամերիկացիների հաղթանակից հետո: Դա կարող է կիրառվել նաեւ Բաղդադում, որտեղ արեւելյան մասի աղքատ թաղամասերը հիմնականում շիաներով են բնակեցված:

Ամերիկյան զորքերը, անշուշտ, շահի բանակի սպանությունների սցենարով չեն շարժվի, քանի որ ամբոխներին վերահսկելու շատ ավելի «նուրբ» մեթոդների են տիրապետում: Բայց բացառված չէ, որ ահաբեկչություն իրականացվի, եւ քանի որ Մ. Նահանգները ահաբեկիչների տանել չի կարող եւ բոլոր արաբներին ու մահմեդականներին մի արշինով է չափում, շիա ծայրահեղականները վաղ թե ուշ կստանան այն, ինչ ցանկանում են: Մի փոքր սպանդ, եւ նրանք գործի կանցնեն:

ԻԻՀԳԽ-ի առաջնորդներն այժմ դեպի Իրաք են շարժվում: Երկու տարի անց նրանք կամ կիշխեն Իրաքում կամ կպայքարեն տարանջատվելու նրանից՝ իրենց հետ տանելով նավթի պաշարների մեծ մասը:

«ԹԵԺ» ԿԵՏԵՐ

«Միջազգային ներումը» մեղադրում է հակաիրաքյան կոալիցիային

«Միջազգային ներում» իրավապաշտպանական կազմակերպությունը Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերի աշխատակազմին ուղարկել է հանրագիր, պնդելով, որ Իրաքում քաղաքացիական բնակչության կորուստները հակաիրաքյան կոալիցիայի զորքերի կողմից ժնեւի միջազգագրի խախտման վկայությունն են:

Իրանական Իսլամական դաշնակցության տվյալներով, կազմակերպության ներկայացուցիչները Մեծ Բրիտանիայի կառավարությունից պահանջել են առավել մանրամասն տեղեկություններ հրապարակել Իրաքի խաղաղ բնակչության զոհերի վերաբերյալ:

Հանրագիրը հանձնել են աշխարհի 50 երկրների պատվիրակներ՝ «Միջազգային ներման» գլխավոր քարտուղար Իրեն Խանի գլխավորությամբ: Ակտիվիստները Բրիտանիայի կառավարությանը կոչ են արել ռազմական հակամարտության ընթացքում ենթարկվել միջազգային օրենքներին:

Կազմակերպության մամլո քարտուղար Նեյլ Դերկինն ակնկալում է հավելյալ տեղեկություններ ստանալ Բաղդադի շուկայում եւ հեռուստակենտրոնի շրջանում խաղաղ բնակիչների ռմբակոծումների քննության ընթացքի վերաբերյալ: Բացի դրանից, Բրիտանիայի կառավարությունից տեղեկություններ են պահանջում այն մասին, թե ինչպես են վարվում իրաքցի ռազմագերիների հետ:

«Մենք տեսնում ենք, թե ինչպես են սպանում եւ խեղանդամ դարձնում խաղաղ բնակիչներին, ուստի մտահոգ ենք այդ հարվածներից եւ ռումբերի բնութագրերից», ընդգծել է Դերկինը:

Անձնասպանական ահաբեկչություն Նաթանիա քաղաքում

Իրաք են ուղարկվել մահապարտներ

Իսրայելի Նաթանիա քաղաքում կիրակի օրը տեղի է ունեցել անձնասպանական ահաբեկչություն, որի հետեւանքով վիրավորվել են երեք տասնյակ անձինք: Զոհվել է միայն ահաբեկիչը: Գործողության պատասխանատվությունն ստանձնել է «Իսլամական ջիհադ» արմատական կազմակերպությունը, հայտարարելով, թե այն «նվիրվում է» Իրաքի ժողովրդին:

Ֆրանսպրեսին ուղարկած փաստաթղթում «Իսլամական ջիհադը» նաեւ հայտարարել է, որ ահաբեկչությունն իրականացվել է Հողի օրվա առթիվ՝ ի հիշատակ 6 արաբների, որոնց 1976 թ. մարտի 30-ին իսրայելական բանակն սպանեց հողերի բռնագրավման դեմ ուղղված ցույցերի ժամանակ:

Դրվատելով «հերոսությամբ եւ դիմադրությամբ աշխարհին զարմացրած» Իրաքի ժողովրդին, արմատական կազմակերպությունն ավելացրել է, թե Իրաք է ուղարկել մահապարտների, որոնք անձնասպանական ահաբեկչություններ կիրականացնեն անգլո-ամերիկյան զորքերի դեմ:

Իսրայելի ոստիկանության եւ բանակի աղբյուրների համաձայն, երեք տասնյակ վիրավորներից տասը զինվորականներ են: Ահաբեկչությունը տեղի է ունեցել «Լոնդոն» սրճարանի մոտ՝ Նաթանիայի կենտրոնում: Ահաբեկչի վրա 3 կգ պայթուցիկ է եղել: Վիրավորներից 6-ի վիճակը ծանր է:

Իսրայելում անձնասպանական նախորդ մահափորձը տեղի է ունեցել Հայֆայում մարտի 5-ին, երբ 17 մարդ էր զոհվել: Կիրակի օրվա ահաբեկչությունն առաջինն է Իրաքի պատերազմի սկզբից ի վեր:

ԿԻՊՐՈՍ

ՄԱԿ-ը անաչառ չէ

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանի տարեկան զեկույցը Կիպրոսում մարդու իրավունքների ոտնահարման վերաբերյալ դարձյալ խուսափում է Թուրքիայի հանդեպ մեղադրական խոսքեր ուղղելուց, գրում է Նիկոսիայից մեր հատուկ թղթակից **Ջորջ Տեր-Բարթողը**:

Զեկույցում, որը ներկայացվել է ժնեւում անցկացվող ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի տարեկան հանդիպմանը, ինչպես նախորդ տարիներին, պարզապես գրված է, որ «Կիպրոսը դեռեւս բաժանված է մնում», շարունակում է մեր թղթակիցը, ավելացնելով, որ այնտեղ ոչ մի բառ անգամ չկա, որ 1974-ից ի վեր կղզու հյուսիսային մասը առօրինաբար գտնվում է թուրքական զավթողական ուժերի ներքո, եւ հույն բնակչության մեկ հինգերորդ մասը ենթարկվել է էթնիկական զտման: Թեեւ Անանի զեկույցը նշում է, որ մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների հետ կապված մտահոգությունները բխում են կղզու բաժանումից եւ ստեղծված քաղաքական իրադրությունից, չի նշում, թե ով է դրանում մեղավոր: Ավելին, սահմանափակումներ մասին խոսելիս Կիպրոսի օրինական կառավարությանն է մեղադրում «անհատներին կղզու դեպի հյուսիսային մաս կամ այնտեղից տեղափոխությունը չքաջալերելու» կամ «թուրքական մասի արտահանման վկայագրերը չճանաչելու մեջ»:

Սրանք անհիմն մեղադրանքներ են, քանի որ եվրոպական դատարանների եւ Անվտանգության խորհրդի կողմից թուրքական մասն անօրինական է ճանաչված եւ դրան ոչ մի կերպ չպետք է օժանդակություն ցուցաբերվի:

Անանն ինքն էլ քաջատեղյակ է Հաագայում իր ջանքերի վերջին ծախողումից եւ դրանում Ռաուֆ Դենքթաշի ունեցած դերակատարությունից:

Մյուս կողմից, անցյալ շաբաթվա մեջ ընդարձակման եվրոպական հանձնակատար Գունտեր Վերհոգենը Թուրքիային դիմելով կոչ է արել նեցուկ կանգնել Կիպրոսի խնդրի կարգավորման ջանքերին: Նա նշել է նաեւ, որ Թուրքիայում զինվորականության դերը բոլորովին չի համապատասխանում եվրամիության անդամ այլ երկրներում գործող զինվորականության դերին:

ՆԱՏՕ-ն Մակեդոնիան հանձնում է Եվրամիությանը

Հյուսիսատլանտյան դաշինքի՝ Մակեդոնիայում գտնվող շտաբում երեկ այդ երկրի խաղաղարար գործողությունների հրամանատարությունը փոխանցվել է Եվրամիությանը:

Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ 2003 թ. մարտի 17-ին ՆԱՏՕ-ի խորհուրդը որոշում է ընդունել Մակեդոնիայի կայունության ապահովման գործողությունն ավարտել 2003 թ. մարտի 31-ին: Սակայն, ինչպես ընդգծել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ջորջ Ռոբերտսոնը, Սկոպյեում կմնան քաղաքացիական եւ զինվորական ներկայացուցիչներ, որոնք Մակեդոնիայի իշխանություններին կօգնեն բարեփոխելու ուժային կառույցները եւ դրանք համապատասխանեցնելու ՆԱՏՕ-ի չափանիշներին:

Մարտի 18-ին եվրախորհուրդը արտգործնախարարների մակարդակով որոշում ընդունեց Մակեդոնիայում խաղաղարար գործողություն սկսելու վերաբերյալ: Որոշման մեջ նշվում է, որ այն հիմնված է ԵՄ 2002 թ. դեկտեմբերյան գագաթաժողովի եզրակացության եւ Մակեդոնիայի նախագահի գրավոր խնդրանքի վրա:

Վերջինիս համաձայն, գործողությունը տեւելու է 6 ամիս: ԵՄ որոշումը համապատասխանում է ՄԱԿ-ի Ան թիվ 1371 բանաձեւին: Գործողության ծրագիրն ու կանոնները մշակել եւ համաձայնեցրել է ՆԱՏՕ-ի հրամանատարությունը:

Ենթադրվում է, որ կկազմավորվի արագ արձագանքման 60 հազարանոց զորաբաժին: ԵՄ խաղաղարար ուժերի հրամանատար, գերմանացի ծովակալ Ռայներ Ֆայսթը միաժամանակ եվրոպայում ՆԱՏՕ-ի զորքերի հրամանատարի տեղակալն է:

Մշակույթ

Չեմ հասկանում ու չեմ ընդունում

Այսօր մեր աշխի առաջ համաշխարհային խաղաքարտություն է ավերվում

Ասում են, որ մեկ մարդու սպանությունը ողբերգություն է, հազարավորների մահը՝ վիճակագրություն: Գոնե այսպես է պատերազմական իրադրություններում: Նաեւ այժմ, երբ ամերիկյան ու անգլիական ուժերն անբարոյականությամբ աննախընթաց մի պատերազմ են սկսել Իրաքի դեմ: Որքանով էլ ԱՄՆ նախագահ Բուշ կրտսերը փորձի աչխարհին ապացուցել, թե այս պատերազմը մղվում է բռնակալ Սադդամ Հուսեյնի վարչակարգը տապալելու, միջազգային ահաբեկչության կենտրոնատեղիներից մեկը վերացնելու համար, այս պատերազմը բնավ չի արդարացվում միջազգային հանրության կողմից: Տնտեսագետներն ամերիկա-անգլիական ներխուժումը բացատրում են տնտեսական, ավելի ճաշ՝ նավթի գործոնով: Բայց ճաշ քիչ է խոսվում այն մասին, որ այսօր մեր աչքի առաջ համաչխարհային մշակույթի բնօրաններից մեկն է ավերվում:

Ընդամենը 400 տարվա պատմություն եւ սեփական ազգային մշակույթ չունեցող մի երկիր՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներն ամենաանհեթեթ պատճառաբանություններով շարունակում է վաղուց որդեգրած մի քաղաքականություն: Նպատակին հասնելու համար կանգ չառնել ոչ մի բանի առաջ եւ սեփական արժեքները գերակա համարել բոլորի նկատմամբ: Ուշադրությամբ հետեւելով պատերազմի մարտադաշտերից տրվող ռեպորտաժներին՝ զգում ես, որ ամենաբարձրաստիճան գեներալից մինչեւ ամենաշարքային զինվորը (հատկապես՝ ամերիկյան) բնավ ցավ չեն զգում մշակութային արժեքների ոչնչացման համար:

Վերջին օրերին ցուցադրվեց Իրաք ներխուժած ամերիկյան զորքերի հրամանատարի տեղակալ գեներալ Բրունֆի մամլո ասուլիսի մասին պատմող ռեպորտաժը, որի ժամանակ Բրունֆը Քաթարում ցուցադրում էր տեսագրություններ, որոնց օգնությամբ փորձում էր բացատրել, թե ինչ ճշգրտությամբ են խոցվում հրապայլերը կամ զինապահեստները, եթե դրանք գտնվում են անգամ հիվանդանոցներում կամ բազմահազար տարիներ առաջ կառուցված պալատների, դամբարանների հարեւանությամբ: Այս «խաչարի» զինվորականը ճգնում էր ապացուցել, որ հրապայլի պայթեցման ժամանակ խաղաղ բնակիչներից զոհեր չեն լինի կամ պատմամշակութային արժեքներին վնաս չի հասցվի: Բնական է, հասկանալուն զինվորականը լոկ հավատում է իր ճշմարտությանը: Իսկ օդաչուներից մեկն ավելի ազնիվ գտնվեց ու ասաց. «Բոլոր տեսակի պայմանագրերը, դաշնագրերը, հռչակագրերը գրում են խաղաթղթերը: Իսկ զինվորը միայն մեկ հռչակագիր, մեկ Աստվածաշունչ ունի՝ զինվորական կանոնադրությունը»:

1954 թ. Հաագայի միջազգային կոնֆերանսը հռչակագիր ընդունեց ռազմական գործողությունների ժամանակ պատմամշակութային արժեքների պահպանման մասին: Եթե Մ. Նահանգները մինչ օրս չի ստորագրել այս հռչակագիրը, ապա Անգլիան կամ Իսպանիան այն գոնե ստորագրել են: Այդ հռչակագրով խիստ պատիժներ են սահմանված այն երկրների համար, որոնք կավերեն պատմամշակութային արժեքները: Սակայն ի՞նչ հոգ:

Մի քանի օր էր անցել պատերազմի սկզբից, երբ ամբողջովին ավերվեց 1200-ամյա Բաղդադում գտնվող միաքեռների նախկին աղարանը՝ Ծաղիկների պալատը: Զգալիորեն վնասվել է ալ Մուսանսիր համալսարանի շենքը, համալսարան, ուր դեռեւս 13-րդ դարում մաթեմատիկա, փիլիսոփայություն եւ օրենսգիտություն էին ուսումնասիրում: Ստացված վերջին տեղեկությունների համաձայն դեռեւս չեն վնասվել պատմամշակութային այնպիսի կարեւոր արժեքներ, որպիսիք են Բաղդադում գտնվող Սուբայդների դամբարանը կամ Մուսա ալ Քադիմի ոսկե մզկիթը: Բայց կարծում ենք, որ դրանց պահպանման համար էլ ոչ մի երաշխիքներ չկան:

Վեց ու կես հազարամյակ գոյատեւած Միջագետքի մշակույթն ավերման եզրին է: Այսօր Իրաքում զավթողական, ավերիչ պատերազմ մղող զինվորականները վաղն ինչպե՞ս կարող են արդարանալ, եթե, Աստված չանի, ավերվեն Շամիրամի կախյալ այգիները՝ աչխարհի 7 հրաշալիքներից մեկը: Մի՞թե հնարավոր չէր որոշ երկրների նախագահների, վարչապետների, բարձրագույն ռազմական ակադեմիաներ ավարտած գեներալ բրունֆների համաչխարհային խաղաքարտության տարական գիտելիքներ հաղորդել, բացատրել, որ Բաղդադից ընդամենը 90 կմ հեռու գտնվող Բաբելոնը եւս մեկ անգամ պետք չէ ավերել, որ Իշտարի դարպասների անգամ մոտակայքում պետք չէ ռումբեր պայթեցնել, որ Սասանյան արքայական տոհմի պալատների հռչակավոր հուշասյունը կամ Մուհամեդի հետեւորդների դամբարանը սոսկ Իրաքի պետության հարստությունները չեն, այլ՝ ողջ աչխարհի, ողջ մարդկության, բոլոր ժամանակների:

Գրեթե 4 հազար տարի առաջ այսօրվա Իրաքի տարածքում օրենսդրական փաստաթղթեր ստեղծվեցին, որոնք դարեր շարունակ օրենսդրական մտքի հիմնաքարեր դարձան շաս ու շաս ժողովուրդների համար: Բաբելոնի Համմուրաբի թագավորի բազալտի վրա սեպագրերով արված օրենքներն այսպես են կարդացվում. «Եթե մարդը խոյ կամ այծ է գողացել, ապա պետք է փոխհատուցի եռակի թանկ գնով... Եթե մեկը տուն է ավերում, ապա պետք է նա հենց այդ տան առաջ սպանվի եւ թաղվի...»: Եթե շումերների եւ ասիրացիների հեռավոր հետեւորդներ իրաքցիները փորձեն իրականություն դարձնել Համմուրաբիի օրենքները, որքա՞ն:

Աչխարհի հարգարժան գիտնականներից մեկը՝ Սանկտ Պետերբուրգի Էրմիտաժի տնօրեն, ակադեմիկոս Բորիս Պիոտրովսկին ցավով հայտարարեց. «Այսօր Ամերիկայի Միացյալ Նահանգները եւ Մեծ Բրիտանիան ավերում են յուրօրինակ մի երկիր-թանգարան, երկիր, ուր ծաղկել է շումերա-ասիրական մշակույթը, ուր ստեղծվել է մարդկության առաջին գիրը՝ շումերականը»:

Ես հասկանում եմ նրանց, ովքեր այս օրերին իրենց ստացած մրցանակներով են հրճվում, ովքեր իրենց սեփական ողբերգություններն են լալիս: Ամեն մարդկայինը օտար չէ հողեղեն-մարդուն: Հասկանում եմ իրենց, բայց չեմ ընդունում: Այսօր մարդկության դարավոր քաղաքակրթության կարեւորագույն օջախներից մեկն է ավերվում: Ես հեռատեսիլով տեսնում եմ Բասրայի դաշտն, բայց հաջողված ռմբակոծությունից վերադարձած, փայլող դեմքով զինվորականին, որն անգամ մտքով չի անցկացնի, թե իր ռմբակոծած քաղաքում՝ Բասրայում ժամանակին ծաղկել է աստվածաբանությունը, ստեղծվել է արաբական դասական քերականությունը: Ես չեմ հասկանում այն զինվորին, ով այսօր ռումբեր է նետում աստվածաշնչյան եդեմի տեղանքի վրա, եւ վաղը, տուն գնալով, իր կողքին միշտ ունենալու է Աստվածաշունչը: Չեմ հասկանում այս պատերազմի ամեն մի բացատրություն: Չեմ ընդունում:

ՄԵՐԳԵՑ ԳԱԼՈՅԱՆ

Երկարատեւ ընդմիջումից հետո

Արդեն 10 տարի ընդհատվել էր երիտասարդ գրողների՝ հանրապետական ամենամյա խորհրդակցությունը հրավիրելու ավանդույթը: Ամեն տարի բանաստեղծության ու արձակի աչխարհ նոր ոտք դրած ստեղծագործողները հանդիպում էին ավագների հետ, մասնակցում գրական քննարկումների ու տուրեւորումների, ընթերցում նաեւ իրենց առաջին գործերը եւ էությամբ ու նյարդերով «ընկալում» գրական մթնոլորտը: Երկարատեւ ընդհատումից հետո ծաղկաձորում վերսկսվեց տարեց ու երիտասարդ սերունդների հանդիպման ավանդույթը: Երիտասարդ գրողների հանրապետական խորհրդակցությանը մասնակցեցին 30 ստեղծագործողներ Հայաստանից, Արցախից, Ջավախքից, Թուրքիայից, Սիրիայից: Նրանց գրական նորամուծությունը քննարկվեց բանաձեւերի ու սեփական պարադիգմների ընթացքում, Նորայր Արզումանյանի ու Վարուժան Վարդանյանի, Էդվարդ Միլիտոնյանի, Հովհաննես Գրիգորյանի, Հրաչյա Սարուխանի, Հովիկ Հովեյանի մասնակցությամբ: Կայացավ նաեւ 2 երիտասարդ հեղինակների՝ Հերմինե Նավասարդյանի «Լուսածերտեր» եւ Նուշիկ Միհայելյանի «Քանիներից այն կողմ» գրքերի շնորհանվեր:

Իսկ թե ինչո՞վ է հասկանալի երիտասարդ գրողների ընդհանրական կերպարը, եւ ինչպե՞ս ընկալել այն, կարծիքները տարաձիգվում են: Գրողների միության քարտուղար Հովիկ Հովեյանը համաձայն չէ հեռատեսությամբ նրանց հայտնի ինչած կտրուկ բնորոշումներին: Թեեւ ինքն էլ խոստովանում է, որ այդ երիտասարդների մեջ կան նաեւ այնպիսիները, ովքեր գրում են շարահյուսական, ոճական սխալներով:

Իբրեւ խորհրդակցության գործնական նշանավորում բացվեց ինտերնետային երիտասարդական թերթի՝ «Սերունդ»-ի առաջին համարը, որի առաքելությունը երիտասարդների ստեղծագործությունների միջազգայնացումն է: Կստեղծվի նաեւ դրա օտարալեզու տարբերակը:

Կ. Դ.

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Ներքին խորհուրդ՝ թվացյալ մակերեսներին

Հարություն Արմենյանի «Երանգ ու խոսք» գիրք-ալբոմի առիթով

Սկիզբը որոնում է բառի, խոսքի, գույնի, երանգի: *«Ամիսներ առաջ սկսած խաղ է այս մեկը:*

Գույներն ու երանգները խոսքի վերածելու փորձ

Խոսք որ կը փորձէ շարունակել ստեղծագործութիւնը:

Այս խաղը սկսաւ հանի մը տասնամեակ առաջ՝ գոյներով ու գիծերով, հոն՝

Միջերկրականի ափին, պատերազմի օր մը:

Տարիներու վրայ երկարող պատմութիւն կայ այս նկարներուն մէջ.

առրուած օրեր ու վայրկեաններ: Այլազան տեղեր:

Խոսք որ կը փորձէ վերարտադրել յուշը. փորձ՝ որ շաս անգամ

Կ'արտայայտէ նոր իրականութիւն մը որ իր կարգերը խզած է արդէն

յիշողութեան ակունքներէն»:

Եվ ապա շարունակվող խոսքը ներդաշնակության ու անդորրի հանգստաբեր զգացողություններ է արթնացնում, եւ սկսվում է հաշշ, մի յուրահատուկ ճամփորդություն աչխարհագրական տարբեր հորիզոններում՝ Հայկական լեռնաչխարհից Միջերկրական, եւ ապա երկրագնդի արեւմտյան կողմը, որտեղ բնության ելեւէջումներն արձագանվում են ամեն բառի, գույնի մեջ: Տպավորությունները պարզ, նկարագրական են՝ ասպիճանաբար, սակայն, վերածվելով այնպիսի առարկայական պատկերների, որոնց խորքում ներքին դինամիկա կա: Սփյուռքահայ մտավորական, Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ Հարություն Արմենյանի ներաչխարհային փնտրտուքի արձագանքն է «Երանգ ու խոսք» ինքնատիպ գիրք-ալբոմը, որ ստեղծված է ներքին կատարյալ ներդաշնակությամբ. ինքնարտահայտման երկու եղանակները՝ խոսքը եւ գույնը ամբողջացնում են հեղինակի տպավորատաշտությունը: Այս տողերի անկեղծությունը եւ նկարագրական պարզությունը թվացյալ են, բառը այնքան անպարզ է, որ «ստեղծված» տեսարան-պատկերները գրեթե չեն տարբերվում իրականությունից, այնպես որ ստեղծագործությունների գեղարվեստական ժանրային առանձնահատկություններն էլ դժվար որոշելի են:

Սկիզբը Հայկական լեռնաչխարհում է, կարոտ ու մեղմ, նուրբ զգացողություններ, արբեցում օդի սառը շփումից, բարձունքներում տիրապետող «վծիտ արտահայտություններից»՝ վայրերից, ուր հիշողությունը կոփված է ժայռի կերպարանքով: Բնությունը առհասարակ հուշարձան է՝ նախաստեղծ վիճակների անդրադարձներով: Հեղինակի հայացքը՝ տարածությունների նվաճման ընդգրկումից, հասունանում, հասնում է պատմության սկզբներին, միջնադարյան պարիսպներին, ու պահի անակնկալներին: Աչխարհը գույների խաղի մեջ է: Երանգափոխությունների պատրանքների մեջ բառն անշարժ վիճակներում ստեղծում է մի տեսակ թանգարանային լռություն: Երկնքի ու հորիզոնի հանդիպման վայրը դառնում է մտքի ազատության, հոգու թռիչքի իրացման պահ: *«Կատրյոնը հոս նաեւ խաղաղ տարածութիւն է, ուր պետք է նաւարկել հասնելու համար հորիզոնի մագնիսականին:*

Այստեղ դէպի երկիր ծգողական ուժերն ամբողջովին ծերբազատուած տարերու

կերտնախտոյս պատճէն է զգացումի ու տրամաբանութեան հանդիպման կէտին.

ազատութիւնը կերպարանափոխելու»:

Հեղինակը գեղեցիկը փնտրում է ամենուր, գույնի ու տարի որեւէ համադրության մեջ՝ կիսակառույց մի շենքի, կամարի, սենյակի, լեռան ստորոտի՝ աչխարհը մեծ ստեղծագործություն համարելու համոզմունքով:

Բնաբաշխական զգացումները գնալով խտանում են, պահի վայելքի բերկրանքն իբրեւ գույն, խորհուրդ, դիցաբանություն ու ծնունդ կրում է Լույսը: Մայրամուտը հաճախ փախուստ է ենթադրում, խաղաքարտություններից հեռանալու, նոր իրականություն ստեղծելու ծիգերը, ներքին լճակը, կոզյակներն ու ինքնուրույն ծովախորշերը հոգու ապաստանն են, որովհետեւ «Հոս կրնանք մեր երազային ադրիլ»:

Հովվերգություն, հուշագրություն, անցյալ, երազ, մտերմություն մայրամուտի, արշալույսի, երկնքի կապույտի հետ, ուր «սուզուիլ, լուծուիլ, կորսուիլը» դառնում են ներառանձնացումների կատարյալ վիճակ: Ողջ բնությունը պատմություն է, հիշողություն, կյանք: Երբեմն իրականության պատրանքայնությունը, ժամանակի անցողիկությունը, անիրականի, երազի ծիրում է հայտնվում՝ իբրեւ քարի լուռ հմայք, ծովախորշի դիմագիծ: Իր համար ճշմարիտը հանդիպումն է գունային ընդմիջումներին. արշալույսը սկիզբ է, իսկ կյանքը՝ վայրկյանի հղացք: Այստեղ գույների լեզուն թարգմանելու եզակի կարելիությունը բարեբախտություն է, բայց աչխարհը միայն գույնով բացատրելը երեւակայության արդյունք չի կարող լինել: Որովհետեւ աչխարհը բացատրելի է միայն հոգեւոր փորձով: Գույնը հերթական սիմվոլն է՝ ներքին հագեցվածությամբ: Բայց այստեղ ակնհայտ է աչխարհի մեծածավալ մակերեսների ամենաշնչառու գոյության՝ սիրո առկայությունը, բառ, որ այս կատույտ-կանաչ մթնոլորտում, սակայն, բացակա է, բայց ներարբերաբար կրկնվող ջերմությունը նաեւ սիրո արարում է: Գույնի սղեկտրը լայն է, որից անդին անիմանալին է, չփորձվածը, որ կատարյալ լինելու հավակնությունն ունի, իսկ աչխարհի ծեւախեղումները մեր մտքերի արտապատկերումներն են: Մեր անցյալը մեր ներկան է՝ ելակետային սկզբունքը՝ *«Անցեալի առրուած լաւագոյն վայրկեանները կը պայմանաւորեն ապագայի մեր փնտռտուքն ու երազները»:*

Ընդելուզվող գույների հոլովույթում ծեւերը եւ կերպարները ներքին տիեզերքի տրփյունով են ապրում իրենց կենսատարածքները եւ ինքնաճանաչման փորձը դառնում է աչխարհի ու մարդկանց հետ հաղորդակցման սկիզբ, ըստ որում մտքի հանգուցակետերում, ենթագիտակցականի, անգիտակցականի եւ գիտակցականի մակարդակներում բազում առեղծվածների մեջ է որոնելի կյանքի իմաստն ու նպատակը, երբ կայանում է հանդիպումը Ստեղծագործի հետ, երբ միտքը, զգացմունքը եւ հոգին վերածվում են նոր էութենականության, որ նշանավորում է գոյի սկիզբը: *«Հոս է ուր դարերու աղօթքները կ'իմաստաւորուին ու մարմին կը ստանան, նոր գաղափարներ կը կազմաւորուին ու կը հունաւորեն ապագան: Հոս այլեւս ներքին աչխարհով կը պայմանաւորուի արտաքին կեանքի ընկերութեան վերադրումը: ...Հոս ստեղծագործ մտքին, յախտուն զգացումներուն, չյագեցած հոգիին ու իր արտաքերը աչխատակցին մէջ փնտռող ոգիին հանդիպման կէտն է: Կէտ, որուն ներքին գիւսը ընելու համար կ'արժէ ապրիլ կեանքի մը զրկանք ու ցաւ»:*

Ներաչխարհային փնտրտուք-խարտեզագրումի ինքնատիպ ճամփորդությունների այս գիրք-ալբոմը բովանդակության, ներքին կառուցվածքային առումով աչքի է ընկնում կիրք մտածողությամբ եւ գեղագիտությամբ: Իսկ երբ հեղինակը բառի ու գույնի ստեղծած հարթություններում գտնի իր ընթերցողին, իրերի եւ երեւույթների պարզ գծագրումներից անպայման կհաջողվի նրան հեռացնել ավելի խորը տարածքներ՝ ուրվագծելու սեփական հոգու խճանկար-խարտեզը: Հանդարտ՝ հորիզոնից անդին:

Գրքի բարձրարվեստ տպագրությունն իրականացրել է Երեւանի «Փրինթինֆո» հրատարակչությունը՝ իրեն հատուկ բացառիկ ճաշակով, գրագիտությամբ եւ հմտությամբ: Իսկ հեղինակային պատկերազարդումները եւ դասավորումն ապահովում են հաղորդակցման հաճելի տրամադրությունը եւ մթնոլորտը:

ՄԵԼՈՆՅԱ ՔԱՂԱՔՅԱՆ

Հայաստան-Յուսիսային Իռլանդիա՝ 1-0 (0-0)

Երեւան, 29 մարտի, «Հանրապետական» մարզադաշտ, 12 հազար հանդիսական:

Մրցավար՝ Ռ. Բեհ (Լիխտենշտեյն)

Հայաստան – Ռոման Բերեզովսկի, Եղիշե Մելիքյան, Կարեն Դոխոյան, Սարգիս Հովսեփյան, Հարություն Վարդանյան, Խոսե Բիլիբիո, Արթուր Պետրոսյան (Համլետ Մխիթարյան, 89), Արթուր Ոսկանյան, Ալբերտ Սարգսյան (Արթուր Մկրտչյան, 88), Արտավազդ Քարամյան (Աղվան Մկրտչյան, 87), Արման Քարամյան:

Հս. Իռլանդիա – Մայք Թեյլոր, Աարոն Հյուգս, Գրանտ Մակֆեն, Ստեֆեն Քրեյգան, Մարկ Ուիլյամս, Ստեֆեն Լոմաս, Քեյթ Գիլեսպի, Դեմիեն Ջոնսոն, Դեւիդ Հիլի, Ջեյմս Քուին (Սայուարտ Էլիոտ, 71), Փոլ Մակվեյ:

Գոլը խփեց Արթուր Պետրոսյանը (86):

Զգուշացվեցին Մելիքյանը, Հովսեփյանը, Քրեյգանը:

Երկար սպասված հաղթական

Միխայ Ստոյկիցայի հաղթական նորամուտը

ՀՀ ազգային հավաքականը վերջապես հաղթեց: Պաշտոնական մրցումներում մեր ֆուտբոլիստները գրեթե 3,5 տարի չէին ճաշակել հաղթանակի քաղցրությունը: Վերջին անգամ հավաքականը հաջողության էր հասել 1999 թ. հոկտեմբերի 9-ին՝ հյուրընկալվելիս 3-0 հաշվով հաղթելով Անդորրայի ընտրանուն: Ընտրական մրցաշարերում անցկացրած 43 հանդիպումներում սա մեր հավաքականի ընդամենը 5-րդ հաղթանակն է: Խորհրդանշական է, որ հաղթական գոլն իր հոբելյանական՝ 60-րդ խաղում խփեց հավաքականի ռմբարկու Արթուր Պետրոսյանը՝ գոլերի թիվը հասցնելով 10-ի: Այս հաղթանակը նաեւ «Հանրապետական» մարզադաշտում հավաքականի անդրանիկ հաղթանակն է: Իսկ հավաքականի գլխավոր մարզիչ Միխայ Ստոյկիցան մեր մարզիչներից միակն է, որն իր նորամուտը պաշտոնական մրցումներում հաղթանակով նշանավորեց:

Հենց խաղասկզբից մրցակիցները մրցակցությանը բարձր տեմպ հաղորդեցին: Դաշտի տերերի առաջին իսկ գրոհն ավարտվեց Արման Քարամյանի վսանգավոր հարվածով: Հյուրերը պարտի տակ չմնացին եւ ֆիզ անց Մակվեյի հարվածից հետո մեր հավաքականին վերահաս գոլից փրկեց դարպասի հորիզոնական ծողը: Ընդհանրապես առաջին խաղակեսում հյուրերն ավելի գրագետ էին գործում եւ վսանգավոր գրոհներ էին ձեռնարկում: Մեկ անգամ եւս Մակվեյը սպառնաց դարպասին, իսկ Հիլի գլխով հարվածից հետո գնդակը հրաշքով չհայտնվեց դարպասում:

ՀՀ հավաքականը գրոհները հիմնականում կազմակերպում էր աջ թեւով, որտեղ ակտիվ էր գործում Ալբերտ Սարգսյանը: Առջեւի գծում Արման Քարամյանն էր, որին գրոհների ժամանակ միանում էին Արթուր Պետրոսյանն ու Արտավազդ Քարամյանը: Երկու անգամ Պետրոսյանը ճշգրիտ փոխանցումով հարվածի դուրս բերեց Արման Քարամյանին, սակայն մի դեպքում նրան վայր գցեցին, մյուս դրվագում մեր հարձակվողը հաղթեց եւ կորցրեց գոլ խփելու լավ հնարավորությունը: Ընդհանրապես առաջին խաղակեսում մեր թիմի գործողություններն աչքի չէին ընկնում հստակությամբ, կիսապաշտպաններին չէր հաջողվում կազմակերպել խաղը:

Բարեբախտաբար, ընդմիջմանը Ստոյկիցային հաջողվեց շտկումներ կատարել թիմի գործողություններում, վերադասավորել ուժերը: Արդյունքում 2-րդ խաղակեսում Հայաստանի հավաքականը տիրեց նախաձեռնությանը եւ իր կամքն էր թելադրում մրցակցին: Ճիշտ է, կրկին մեր ֆուտբոլիստները չէին կարողանում իրացնել գոլային պահերը: Հարմար դիրքերից վրիպեցին Արման եւ Արտավազդ Քարամյաններն ու Պետրոսյանը: Արման Քարամյանից սանալով գնդակը, նա մեծ արագությամբ ճեղքեց հյուրերի պաշտպանությունը, խաբուսիկ շարժումներով շրջանցեց պաշտպաններին եւ խփեց այնքան երկար սպասված հաղթական գոլը:

Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում տարած անդրանիկ հաղթանակն, ինչ խոսք, ուրախալի է: Սակայն եթե անկեղծ լինենք, արդա հավաքականի ցուցադրած խաղը դեռեւս չի գոհացնում: Շատերին զարմացրեց մեկնարկային կազմում Եղիշե Մելիքյանի ընդգրկումը, որն այդպես էլ չկարողացավ իրեն լիովին դրսեւորել: Շատ թույլ հանդես եկավ Արթուր Ոսկանյանը, որին, կարծում ենք, իսպանացիների հետ խաղում պետք է փոխարինի Ռոմիկ Խաչատրյանը: Անհանգստացնում է նաեւ առջեւի գծի խաղը: Մեր ֆուտբոլիստներին չափազանց դժվար է ճեղքել մրցակցի պաշտպանությունը, իսպառ բացակայում են հեռահար հարվածները: Զգացվում է ֆիզիկապես ամուր հարձակվողի պակաս, որն ի վիճակի լինի խաղալ հարձակման կենտրոնում: Միայն Պետրոսյանի ճեղքումների վրա հույս դնել չի կարելի: Այնպես որ, խաղի կազմակերպման, գրոհների արդյունավետությունը բարձրացնելու առումով Միխայ Ստոյկիցան բավական լուրջ աշխատանք ունի կատարելու:



Մրցաշարային աղյուսակ
6-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Իսպանիա	3	2	1	0	7-2	7
2. Ուկրաինա	4	1	3	0	6-4	6
3. Հայաստան	3	1	1	1	3-4	4
4. Հունաստան	3	1	0	2	2-4	3
5. Հս. Իռլանդ.	3	0	1	2	0-4	1

ՀԱՆԴԻՊՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Խաղը գնահատում են մարզիչները

Միխայ Ստոյկիցա-Սա իմ ոիսկի խաղն էր եւ ուրախ եմ, որ հաղթեցինք: Շնորհակալ եմ ֆուտբոլիստներից, որոնք հաղթանակի համար ներդրեցին բոլոր ուժերը, հավատարիմ մնացին մշակած մարտավարությանը, խաղային կարգապահությունը բարձր էր: Ճիշտ է, առաջին 15 րոպեներին մարտավարական որոշ սխալներ թույլ տվեցին, սակայն հետագայում շտկեցին: Առաջին խաղակեսում 2 թիմերն էլ դարպասները գրավելու հնարավորություններ ունեցան, սակայն չօգտագործեցին: Ընդմիջմանը տղաներին ներշնչեցի, որ մրցակիցը բնավ էլ մեզանից ուժեղ չէ, հարկավոր է անկաշկանդվեցինք ֆուտբոլիստներին հոգեբանորեն պայքարի մղել, ինչն էլ ի վերջո ցանկալի արդյունք տվեց: Որեւէ մեկին չեմ ուզում առանձնացնել, բոլորն էլ հաղթանակի համար ներդրեցին իրենց ուժերը:

Այսօր տղաները դեռեւս ֆիզիկապես լավ մարզավիճակում չեն, ուստի դժվար էր ողջ խաղի ընթացքում պահպանել բարձր տեմպը, մեծ ուժերով նահանջել ու գրոհել, դիմել պրեսինգի: Մենք հաղթեցինք մի թիմի, որը բազմիցս մասնակցել է աշխարհի առաջնություններին: Առջեւում իսպանացիների հետ հանդիպումն է: Կաշխատենք լավ խաղ ցուցադրել: Հնարավոր են փոփոխություններ կազմում: Ֆուտբոլիստներից այդ խաղում մեծ կենտրոնացում է պահանջվում:

Սեմուել Մակիլռոյ-Նախ շնորհավորում եմ մրցակցին հաղթանակի առթիվ, հաջողություն մաղթում նոր մարզչին: Առաջին խաղակեսում գոլ խփելու լավ պահեր չօգտագործեցինք: Գիտեի, որ ընդմիջումից հետո ավելի բարձր տեմպ էին հաղորդելու: Փորձեցինք հակագրոհներ ձեռնարկել, սակայն պաշտպանությունը շատ ուժեղ էր, մրցակիցն անբերի էր գործում: ՀՀ հավաքականից ինձ դուր եկավ Արթուր Պետրոսյանը, որին մեր պաշտպաններն այդպես էլ չկարողացան վնասազերծել: Մեր թիմում պակասում էր հենց նրա նման ֆուտբոլիստ:

Աղասու հերթական հաջողությունը

Անդրե Աղասու հաղթանակով ավարտվեց Մայամիի թենիսի տղամարդկանց մրցաշարը: Եզրափակիչում նա միեւնույն 6-3 հաշվով երկու խաղափուլում հաղթեց իսպանացի Կառլոս Մոյային եւ արժանացավ 500 հազար դոլարի: Աղասին պահպանեց չեմպիոնի տիտղոսը: Անցյալ տարի նա վճռական խաղում պարտության էր մատնել Ռոժե Ֆեդերերին: Ամերիկացի թենիսիստն արդեն 6-րդ անգամ է հաղթող ճանաչվում Մայամիում: Զուգախաղում Ֆեդերեր-Միրնի զույգը հաղթեց Պաես-Ռիկլ երկյակին (7-5, 6-3): Կանանց մրցավեճում հաջողությունն ուղեկցեց Սերենա Ուիլյամսին, որը շահեց մրցախաղը Ջենիֆեր Կապրիատուց (4-6, 6-4, 6-1): Դա ընթացիկ մրցաշրջանում Սերենայի շահած 3-րդ մրցաշարն էր եւ 22-րդ մրցանակը պրոֆեսիոնալ թենիսիստի կենսագրությունում: Սերենան այս տարի առայժմ անպարտելի է՝ 17 անընդմեջ հաղթանակ:

Նախապատվությունը տվեց կանադացի գեղասահորդներին

Վանկուվերում իրենց մրցավեճն ավարտեցին գեղասահորդները: Կանանց մենասահքում չեմպիոնուհու տիտղոսին արժանացավ փորձառու Միշել Կվանը: Արծաթե մեդալը բաժին հասավ ռուսաստանցի Ելենա Սոկոլովային:

Անսպասելի էին պարային զույգերի մրցումների ամփոփիչ արդյունքները: Մրցավարները նախապատվությունը տվեցին Շե-Լին Բուրն-Վիկտոր Կրատց կանադական զույգին: Կանադացի գեղասահորդներն արդեն 13 տարի հանդես են գալիս միջազգային մրցաստարեզներում, սակայն առաջին անգամ արժանացան աշխարհի չեմպիոնի կոչմանը: Իսկ ահա ոսկե մեդալների գլխավոր հավակնորդներ Իլյա Ավերբուխն ու Իրինա Լոբաչովան ստիպված էին բավարարվել մրցանակային 2-րդ տեղով: Բրոնզը բաժին հասավ բուլղարացիներ Ալբենա Դենկովային ու Մաքսիմ Ստավիյսկուն:

Իրանը կարող է բոյկոտել առաջնությունը

Սեպտեմբերի 12-14-ը Նյու Յորքում պետք է անցկացվի ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի հերթական առաջնությունը, որի արդյունքներով պետք է ընտրվեն 2004 թ. Աթենքում կայանալիք ամառային օլիմպիադայի մասնակիցները: Իրանի ըմբշամարտի ֆեդերացիան հայտարարել է, որ կարող է բոյկոտել առաջնությունը եւ չմասնակցել մրցումներին: Պատճառն այն է, որ ամերիկացիները պատրաստվում են մրցումների բոլոր մասնակիցներից վերցնել մատնահետքերը, ինչը իրանցիները վիրավորական են համարում: Իրանը պաշտոնապես արդեն դիմել է ըմբշամարտի միջազգային ֆեդերացիային առաջնությունն այլ երկիր տեղափոխելու խնդրանքով:

Յորդանեսկուն ստիպված էր հրաժարական տալ

Ֆուտբոլի եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի 4-րդ տուրն աչքի ընկավ անակնկալ մի քանի արդյունքներով: Դրանցից գլխավորն աշխարհի փոխչեմպիոն Գերմանիայի հավաքականի ոչ-ոին էր (1-1) սեփական հարկի տակ Լիտվայի ընտրանու հետ մրցախաղում: Ռումինացիները Բուխարեստում ջախջախիչ պարտություն կրեցին դանիացիներից (2-5): Խաղից հետո ռումինացիների գլխավոր մարզիչ Անգել Յորդանեսկուն հրաժարական տվեց: Ռուսաստանի հավաքականն անպարտելիորեն զիջեց ալբանացիներին (1-3): Հայ ֆուտբոլասերներին առավել հետաքրքրող Ուկրաինայի եւ Իսպանիայի հավաքականների մրցավեճն ավարտվեց ոչ-ոի (2-2): Այդ խաղը դրամատիկ ավարտ ունեցավ: Արդեն 11-րդ րոպեին Անդրեյ Վորոնինը բացեց հաշիվը: Իսպանացիներին միայն խաղավարից 7 րոպե առաջ Ռաուլի ջանքերով հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը: 4 րոպե անց էլեւերիան առաջ մղեց հյուրերին եւ, թվում էր, իսպանացիները հաղթանակ կտոնեն: Սակայն ավելացված ժամանակում Գորշկովը ուկրաինացիներին փրկեց պարտությունից: Այդ խաղում իսպանացիները հանդես են եկել հետեւյալ կազմով.

Կասիլյաս, Արանսաբալ, Սալգադո, Սեզար, Մարչենա, Ալբելդա (Խավի, 66), Վիսենտե (Տրիստան, 78), Բարախա, էլեւերիա, Ռաուլ, Գուտի (Վալերոն, 66):

Ներկայացնում ենք խաղերի համառոտ վիճակագրությունը.

Կիպրոս-Իսրայել՝ 1-1
0-1՝ Աֆեկ (2), 1-1՝ Ռաուֆման (60):

Ֆրանսիա-Մալթա՝ 6-0
Վիլտորդ (37), Անրի (39, 54), Զիդան (57՝ 11 մ, 80), Տրեզեգե (71):

Բոսնիա-Լյուքսեմբուրգ՝ 2-0
Բոլիչ (53), Բարբարեզ (79):

Ռումինիա-Դանիա՝ 2-5
1-0՝ Մուտու (5), 1-1՝ Ռոմեդալ (9), 2-1՝ Մունտյանու (47), 2-2՝ Գրավեսեն (53), 2-3՝ Թոմասոն (71), 2-4՝ Կոնտրա (73, ինքնագոլ), 2-5՝ Ռոմեդալ (90):

Բելառուս-Մոլդովա՝ 2-1
0-1՝ Չեբոտար (14), 1-1՝ Կուտուզով (42), 2-1՝ Գուրենկո (58):

Հոլանդիա-Չեխիա՝ 1-1
1-0՝ Նիստելրոյ (45), 1-1՝ Կոլլեր (68):

Լեհաստան-Հունգարիա՝ 0-0

Գերմանիա-Լիտվա՝ 1-1
1-0՝ Ռամելով (8), 1-1՝ Ռաժանաուսկաս (73):

Շոտլանդիա-Իսլանդիա՝ 2-1
1-0՝ Կ. Միլլեր (12), 1-1՝ Գուդյոնսոն (48), 2-1՝ Ուիլկի (72):

Ուկրաինա-Իսպանիա՝ 2-2
1-0՝ Վորոնին (11), 1-1՝ Ռաուլ (83), 1-2՝ էլեւերիա (87), 2-2՝ Գորշկով (90):

Լիխտենշտեյն-Անգլիա՝ 0-2
Օուեն (28), Բեքհեմ (53):

Մակեդոնիա-Սլովակիա՝ 0-2
Պետրաշ (28), Ռեյստեր (90):

Խորվաթիա-Բելգիա՝ 4-0
Սրնա (8), Պրսո (53), Մարիչ (69), Լեկո (76):

Իտալիա-Ֆինլանդիա՝ 2-0
Վիերի (5, 23):

Ուելս-Ադրբեջան՝ 4-0
Ահմեդով (1, ինքնագոլ), Սմիդ (40), Հարտսոն (44), Գիգզ (52):

Վրաստան-Իռլանդիա՝ 1-2
0-1՝ Դաֆ (18), 1-1՝ Կոբիաշվիլի (61), 1-2՝ Դոխերտի (85):

Ալբանիա-Ռուսաստան՝ 3-1
1-0՝ Ռակլի (20), 1-1՝ Կարյակա (77), 2-1՝ Լալա (79), 3-1՝ Տարե (82):

Մրցաշարային աղյուսակներ
1-ին խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ֆրանսիա	4	4	0	0	17-1	12
2. Իսրայել	2	1	1	0	3-1	4
3. Կիպրոս	3	1	1	1	4-4	4
4. Սլովենիա	2	1	0	1	3-5	3
5. Մալթա	5	0	0	5	1-17	0

2-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Դանիա	3	2	1	0	9-4	7
2. Նորվեգիա	3	2	1	0	5-2	7
3. Ռումինիա	4	2	0	2	12-6	6
4. Բոսնիա	3	1	0	2	2-5	3
5. Լյուքսեմբ.	3	0	0	3	0-11	0

3-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Հոլանդիա	3	2	1	0	7-1	7
2. Չեխիա	3	2	1	0	5-1	7
3. Ավստրիա	3	2	0	1	4-3	6
4. Բելառուս	4	1	0	3	2-8	3
5. Մոլդովա	3	0	0	3	1-6	0

4-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Լատվիա	3	2	1	0	2-0	7
2. Հունգար.	3	1	2	0	4-1	5
3. Լեհաստան	3	1	1	1	2-1	4
4. Շվեդիա	2	0	2	0	1-1	2
5. Սան Մար.	3	0	0	3	0-6	0

5-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Շոտլանդ.	3	2	1	0	6-3	7
2. Գերմանիա	3	2	1	0	5-2	7
3. Լիտվա	4	1	1	2	3-6	4
4. Իսլանդիա	3	1	0	2	4-4	3
5. Ֆարերներ	3	0	1	2	3-6	1

7-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Թուրքիա	3	3	0	0	10-1	9
2. Անգլիա	3	2	1	0	6-3	7
3. Սլովակիա	3	1	0	2	3-5	3
4. Մակեդոն.	4	0	2	2	4-7	2
5. Լիխտենշտ.	3	0	1	2	1-8	1

8-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Բուլղարիա	3	3	0	0	6-1	9
2. Բելգիա	4	2	0	2	2-6	6
3. Խորվաթ.	3	1	1	1	4-2	4
4. Էստոնիա	2	0	1	1	0-1	1
5. Անդորրա	2	0	0	2	1-3	0

9-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ուելս	4	4	0	0	10-1	12
2. Իտալիա	4	2	1	1	6-3	7
3. Սերբիա	3	1	2	0	5-3	5
4. Ֆինլանդ.	4	1	0	3	3-6	3
5. Ադրբեջան	5	0	1	4	2-13	1

10-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Շվեյցարիա	3	2	1	0	7-3	7
2. Ռուսաստ.	3	2	0	1	9-6	6
3. Ալբանիա	3	1	1	1	5-6	4
4. Իռլանդիա	3	1	0	2	5-7	3
5. Վրաստան	2	0	0	2	2-6	0

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ARMENTEL

Հարգելի պարոնայք.

«Արմենտել» ՀՁ-ն Ձեր ուշադրությանն է ներկայացնում իր նոր «Գովազդի տեղադրում տելեֆարտերի եւ բջջային վերալիցքավորման քարտերի վրա» նախագիծը: Այսուհետ դուք կարող եք տեղադրել Ձեր ընկերության կամ կազմակերպության գովազդը վերոհիշյալ քարտերի վրա: Քարտֆոններից եւ «Easy Card»-երից օգտվող բոլոր բաժանորդների համար գովազդը քարտերի վրա կհանդիսանա ձեր այցեքարտը, որը ցանկացած պահին կգրավի նրանց ուշադրությունը: Կից ներկայացվում են համապատասխան գնացուցակները:

Վերալիցքավորման քարտերի վրա գովազդների տեղադրման սակագներ

Քարտերի քանակը	Գովազդի սակագինը վերալիցքավորման քարտի վրա ($ ԱՄՆ)		
	Սակագին	ԱԱՀ 20%	Սակագինը ԱԱՀ-ով
Վերալիցքավորման քարտ 5000 դրամ			
5,000-10,000	0,05	0,01	0,06
10,000-20,000	0,045	0,009	0,054
20,000>	0,04	0,008	0,048
Վերալիցքավորման քարտ 10000 դրամ			
5,000-10,000	0,04	0,008	0,048
10,000-20,000	0,035	0,007	0,042
20,000>	0,03	0,006	0,036
Վերալիցքավորման քարտ 20,000 դրամ			
5,000-10,000	0,03	0,006	0,036
10,000-20,000	0,025	0,005	0,03
20,000	0,02	0,004	0,024

Տելեֆարտերի վրա գովազդների տեղադրման սակագներ

Քարտերի քանակը	Գովազդի սակագինը 1 երեսի համար ($ ԱՄՆ)			Գովազդի սակագինը 2 երեսի համար ($ ԱՄՆ)		
	Սակագին	ԱԱՀ 20%	Սակագինը ԱԱՀ-ով	Սակագին	ԱԱՀ 20%	Սակագինը ԱԱՀ-ով
Տելեֆարտ 50 միավոր						
5,000-10,000	0,05	0,01	0,06	0,06	0,012	0,072
10,000-20,000	0,045	0,009	0,054	0,054	0,0108	0,0648
20,000	0,04	0,008	0,048	0,048	0,0096	0,0576
Տելեֆարտ 100 միավոր						
5,000-10,000	0,04	0,008	0,048	0,048	0,0096	0,0576
10,000-20,000	0,035	0,007	0,042	0,042	0,0084	0,0504
20,000	0,03	0,006	0,036	0,036	0,0072	0,0432
Տելեֆարտ 300 եւ 500 միավոր						
5,000-10,000	0,03	0,006	0,036	0,036	0,0072	0,0432
10,000-20,000	0,025	0,005	0,03	0,03	0,006	0,036
20,000	0,02	0,004	0,024	0,024	0,0048	0,0288

Ծանոթություն՝ գովազդների տեղադրման համար քարտերի նվազագույն քանակ է սահմանված 5000 հատ:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել 54 92 71, 28 44 99:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

3 սենյականոց բն. Վարդանանց 28, բն. 34, 9/3 հասցեում, բ/ս 81,2 մ, կապիտալ վերանորոգված, ունի սառը եւ տաք ջրի բաք, լողասենյակի հատակը ջեռուցվող, պատուհանները ձայնամեկուսիչ եվրոպական, օդորակիչ, արբանյակային ալեհավաք, 6 պահարան, մուտքի մոտ 2 մեծ երկաթյա պահարան եւ ավտոնանակ: Գինը՝ 45.000 դոլար: Հեռ.՝ 55-14-82, առանց միջնորդի:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կապանի քաղաքապետարանը 06.05.2003 թ. կազմակերպում է դասական բաց աճուրդ: Վաճառվում է Չարենցի թիվ 2 շենքի առաջին հարկի 26.0 մ² ոչ բնակելի տարածքը: Աճուրդին մասնակցել ցանկացողները մինչեւ 03.05.2003 թ. պետք է ներկայացնեն աճուրդի մասնակցության հայտ, ընկերության (անձը հաստատող) փաստաթղթեր, աճուրդի մասնակցության եւ տոմսի անդորրագրեր:

Տեղեկությունների համար դիմել քաղաքապետարան, հեռ.՝ 658-52:

ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի մարտի 25-ին «Հայաստանի Հանրապետություն» (հ. 57/3191) եւ «Ազգ» (հ. 56/2741) օրաթերթերում պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության եւ աճուրդային վաճառքի մասին հայտարարություններում «Հողամասի վարձակալության՝ գնման նախապատվության իրավունքի կրկնաճուրդով վաճառք» վերնագրի (հ. 13) Նոր Նորքում, Մոլդովական եւ Ն. Ստեփանյան փողոցների հատման մասում (ծածկագիր՝ U02-145) 200 մ² հողամասն ընդգրկվել է մրցույթով վարձակալության տրվող հողամասերի ցանկում:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Քորթիլ կորպորացիայի Հայաստանի մասնաճյուղն աշխատանքի է հրավիրում մեխանիկների հետեւյալ որակավորմամբ.

շինարարական տեխնիկայի մասնագետ, որը կկատարի շինարարական տեխնիկայի վիճակի ստուգման, ինչպես նաեւ վերանորոգման աշխատանքներ:

Թեկնածուները կարող են զանգահարել Քորթիլ կորպորացիայի Հայաստանի մասնաճյուղի գրասենյակ՝ 59-33-88 հեռախոսահամարով:

ՀԱՅԽՆԱՅԲԱՆԿԸ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱՅՆ ՏԵՍԱԿԱՆԻ, այդ թվում.



- բանկային հաշիվների բացում եւ սպասարկում,
- հաճախորդների համար առավել շահավետ պայմաններով ժամկետային ավանդների ընդունում,
- սպառողական եւ առեւտրային վարկերի տրամադրում, այդ թվում՝ ԱՄՆ Գյուղատնտեսության Մարեթինգի աջակցության ծրագրի շրջանակներում վարկերի տրամադրում
- թղթակից բանկերի լայն ցանցի միջոցով դրամական փոխանցումների իրականացում աշխարհի ցանկացած երկիր,
- Western Union եւ «Անելիք» համակարգերով առանց հաշիվ բացելու դրամական փոխանցումների իրականացում,
- ճանապարհային չեկերի վաճառք եւ սպասարկում. աշխարհի բոլոր բանկերի կողմից ընդունվող բանկային չեկերի տրամադրում,
- հաճախորդի հանձնարարությամբ առաջնային եւ երկրորդային շուկաներում պետական արժեթղթերի հետ գործառնությունների իրականացում,
- կոմունալ բոլոր վճարումների ընդունում, այդ թվում՝ քաղաքական եւ շարժական (բջջային) հեռախոսակապի ծառայությունների վճարների ընդունում,
- հարկային վճարումների, նոտարական ծառայությունների դիմաց պետական տուրքերի, Պետավտոտեսչության ծառայությունների դիմաց վճարումների ընդունում:

Հայխնայբանկը իրավաբանական եւ ֆիզիկական անձանց տրամադրում է բանկի հատուկ կահավորված եւ անվտանգության միջոցներով հագեցված տարածքում անհատական բանկային պահարաններ՝ փաստաթղթերի եւ արժեքների պահպանման համար:

Ծառայությունները բանկի կողմից տրամադրվում են ինչպես Գլխամասային գրասենյակի, այնպես էլ ամբողջ հանրապետության տարածքում, այդ թվում՝ հեռավոր տարածաշրջաններում գործող մասնաճյուղերի միջոցով: Բանկի մասնաճյուղերի հաճախորդներին սպասարկում են

- երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ 9:00-ից մինչեւ 17:00
- շաբաթ օրերին՝ 10:00-ից մինչեւ 16:00

Հայխնայբանկում գործում է Դիլինգային կենտրոն, որտեղ հաճախորդներին հնարավորություն է ընձեռվում երկուշաբթիից ուրբաթ օրերին վարձակալել օրը 24 ժամ գործող, միջազգային տեխնիկական եւ տեխնոլոգիական չափանիշներին համապատասխանող տերմինալ: Դիլինգային կենտրոնին կից գործում է Ուսումնական կենտրոնը, որտեղ ցանկացողները հնարավորություն կունենան մասնակցելու ՖՈՐԵՔՍ շուկայում առեւտրի հիմունքներին վերաբերող ուսումնական դասընթացների:

Բանկի ծառայությունների մասին առավել մանրամասն տեղեկություն կարող եք ստանալ Հայխնայբանկի Գլխամասային գրասենյակում, հետեւյալ հասցեով՝

ք.Երեւան, Նալբանդյան փ., 46, հեռ.: 56.07.25, 56.07.63, 54.18.03,

ինչպես նաեւ Երեւանում եւ հանրապետության տարածաշրջաններում գործող մասնաճյուղերից:

2002թ-ի նոյեմբերից իր գործունեությունն է սկսել նաեւ Հայխնայբանկի Ստեփանակերտի մասնաճյուղը (Վազգեն Սարգսյանի փ., 21), որտեղ հաճախորդներին նույնպես առաջարկվում են ժամանակակից բոլոր բանկային ծառայությունները:

Հրավիրում ենք Ձեզ այցելելու Ինտերնետ ցանցում մեր պատշգամբային www.asb.am էջը:

Հայխնայբանկը հրավիրում է մասնավոր անձանց օգտվելու խնայողությունների ներդրավման բնագավառում առաջարկվող իր ծառայություններից

Հայխնայբանկն ընդունում է ցպահանջ եւ ժամկետային ավանդներ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, ՌԴ ռուբլով եւ Եվրոյով: Ավանդները ընդունվում են ժամկետի վերջում, ինչպես նաեւ յուրաքանչյուր ամիս վճարելու պայմանով:

Մասնավոր անձանց խնայողությունների ասիճանական կուտակման նպատակով Հայխնայբանկն ընդունում է հատուկ «Կուտակման» ավանդ: Ավանդի այս տեսակը հնարավորություն է տալիս բացել ավանդային հաշիվը սկզբնական մուծման նվազագույն գումարի չափով, այնուհետեւ որոշակի ժամանակահատվածի ընթացքում (180 օր, 270 օր, 365 օր) պարբերաբար կատարել խնայողությունների կուտակում՝ լրացուցիչ մուծումների ձեւով: Ավանդն ընդունվում է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով եւ Եվրոյով:

Ֆիզիկական անձանց ավանդները Հայխնայբանկում ընդունվում են հետեւյալ պայմաններով.

ԱՎԱՆԴԻ ՏԵՍԱԿԸ	ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ	ՍՈՒՄՄԱՆ ՆԱՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ
ՀՀ դրամով		
Ցպահանջ	2	
Կենսաթոշակային	2	
30 օր ժամկետով	10	50 000
90 օր ժամկետով	12	50 000
180 օր ժամկետով	14	50 000
180 օր՝ եկամուտների ամենամսյա վճարման իրավունքով	13.6	250 000
270 օր ժամկետով	12	50 000
270 օր՝ եկամուտների ամենամսյա վճարման իրավունքով	11.4	250 000
365 օր ժամկետով	12	50 000
365 օր՝ եկամուտների ամենամսյա վճարման իրավունքով	11.4	250 000
«Կուտակման-1» /365 օր/	9	10 000
«Կուտակման-2» /270 օր/	12	10 000
«Կուտակման-3» /180 օր/	10	10 000
ԱՄՆ դոլարով		
Ցպահանջ	2	
30 օր ժամկետով	7.2	$100
90 օր ժամկետով	9	$100
180 օր ժամկետով	10	$100
180 օր՝ եկամուտների ամենամսյա վճարման իրավունքով	9.6	$500
270 օր ժամկետով	8	$100
270 օր՝ եկամուտների ամենամսյա վճարման իրավունքով	7.4	$500
365 օր ժամկետով	7.2	$100
365 օր՝ եկամուտների ամենամսյա վճարման իրավունքով	6.6	$500
«Կուտակման-1» /365 օր/	6	$100
«Կուտակման-2» /270 օր/	8	$100
«Կուտակման-3» /180 օր/	7	$100
Եվրոյով		
«Կուտակման-1» /365 օր/	6	500
«Կուտակման-2» /270 օր/	8	500
«Կուտակման-3» /180 օր/	7	500
ՌԴ ռուբլով		
Ցպահանջ	2	
90 օր ժամկետով	10	RUR 3000

«Գիտ» տպագրատուն, Երեւան, Բաղրամյանաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 5000 Ստորագրված է տպագրության՝ 31. 3. 2003 Գինը՝ 100 դրամ